

ԵԼԱՍՏՂ¹ (ՏՈՄԱՐԱԿԱՆ ՄԻ ԵԶՐՈՒՅԹԻ ՀԵՏՔԵՐՈՎ)

Գայանե Սիմոնյան

Միջնադարյան տոմարական բնագրերում հանդիպում են Ելաստեղի մասին բազմաթիվ գրառումներ, ինչից պարզ է դառնում, որ այն կապված է անշարժ ամսաթվի՝ մայիսի 24-ի հետ՝ հուլյան տոմարով, ինչպես և դրան համապատասխան հայոց շարժական ու անշարժ տոմարների ամսաթվերի հետ, այն է՝ «... Ելն ի մարգաց ի ԺԸ-ն» (ՄՄ թիվ 1999 գրչագիր, էջ 86 ա:) և «Ի ապրիլի ի **ԺԴ անկաստեղ** է հանապազ: Ի Մայիսի **ԻԴ ելաստեղ** է հանապազ (թիվ 1999 գրչ.)», «Ապրիլ է աւետիք Աստուածածնին, ԺԴ **անկաստղ** է ..., մայիս ԻԱ արեգակն յեկաւորն մտանէ, **ԻԴ ելաստղ** է» (թիվ 4454 գրչ.) «Ահկի **Է Անկաստեղ** է: Մարերի **ԺԷ ելաստեղ**» (թիվ 3082 գրչ.):

1126 թվականին ընդօրինակված Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի»-ում կարդում ենք. «**Ջանկբազմաստեղն** այսպէս [արա՛]. Կա՛լ ԺԶ եւ զնահանջն, տո՛ւր ի Հոռի յամսամտէն առաջ, եւ գտանես: [**Ջելն** այսպէս արա՛] Կա՛լ ԻԶ եւ նահանջն տուր Սահմի յամսամտէ յառաջ, **Ել** է»:

Ինչպես ‘Անկաստղ’, այնպես էլ «Ելաստեղ» («Եղաստղ», «Եղաստեղ», «Ել») տոմարական եզրի վերաբերյալ ուսումնասիրողները տարակարծիք են: Բնականաբար, նրանցից ոչ մեկը չի կասկածում, որ դրանք կա՛մ աստղեր են, կա՛մ մոլորակ, սակայն այդ եզրերը վերագրում են տարբեր համաստեղությունների, աստղերի կամ մոլորակի:

Ջ. Էյնաթյանը այն կարծիքին է, որ «Անկաստղ» և «Ելաստղ» ասելով նկատի պետք է ունենալ Բազումք աստեղակույտը, որը տարբեր ժողովուրդների մոտ հայտնի է տարբեր անվանումներով՝ Շուրջպար, Պարողներ, Թոչնի բույն, Բադի բույն ևլն²:

¹ Հոդվածը հրատարակվում է «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմությունից» թեմայի շրջանակում՝ 18T-6D342 ծածկագրով:

² **Ջ. Ա. Էյնաթյան**, Տոմարի և երկնային լուսատուների կապը հայ տոմարագիտական մատենագրության մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 4 (115), Եր., 1986, էջ 171:

Գ. Բրուտյանը առնչում է **Բույլքի** գլխավոր աստղ **Ալկիոնի** արեգակնային անկման և ամբարձման հետ¹:

Ուշագրավ է Ղ. Ալիշանի կարծիքը այս խնդրի վերաբերյալ. «Աստեղ բառի մեկ երկու բարդեալ անուանք այլ կան, որ չեն նշանակեր հատուկ աստղ մի ինչպես Ելաստղ և Անկաստղ, որ Շնկան բարձրանալն և ցածնալը կամ երևնալն ու աներևութանալը կնշանակեն, որոնք յիշուին և ի նորագոյն տոմարս ուրիշ քանի մի անուանց հետ, որք ավելի կրոնական և աղթարական իմաստ ունին»:

Թեև Ղ. Ալիշանը չի ընդունում, որ Անկաստղը և Ելաստղը աստղի կամ աստղերի հատուկ անուններ են, սակայն կապում է Շնկան աստղի, այն է՝ Սիրիուսի անկման ու ելքի հետ: Սակայն հետաքրքիրն այն է, որ նա այդ անունները դիտում է, որպես կրոնական ու աղթարական իմաստ ունեցող բառեր: Եվ այստեղ մենք համամիտ ենք Ղ. Ալիշանի հետ, որ այդ եզրերը կապված են ինչպես վաղնջական, ու քրիստոնեական հավատալիքների, այնպես էլ այլ կենդանակերպի, սակայն ոչ Շնկան աստղի հետ²:

Ինչպես գրել ենք մեր նախորդ հոդվածներից մեկում³ «Անկաստղն» ու «Ելաստղը» աստղերի կամ աստղաբույլերի կոնկրետ անվանումներ են: Այս տրամաբանությամբ՝ **Անկաստեղը** պետք է հասկանալ **Անկ կամ Զանկ** անունով աստղի կամ աստեղատան անվանում, որը մեր պարզաբանմամբ ժամանակակից «**ՔՆԱՐ**» համաստեղության անվանումն է⁴, իսկ **Ելաստղը՝ Ել...** կամ **Եղ...** արմատ ունեցող աստղանուն է, ինչպես որ հանդիպում ենք տարբեր գրչագրերում կամ մեկնություններում՝ Ելաստեղ, Ելաստղ, Եղաստղ, և այս դեպքում անվանված է ոչ թե համաստեղությունը, այլ ուղղակի կարևորագույն որևէ աստղ, քանի որ դրա հետ չի գործածվում բազմաստեղ բառը:

Ելաստեղը կամ Եղաստեղը բարդ բառ է, նրա առաջին արմատը Ել = ԵՂ-ն է, ինչը, բացարձակապես չի նշանակում ելք, շատ պարզ պատճառով, որ այդ իմաստը համազոր =եղ= արմատով հնարավոր չէ արտահայտել:

¹ Գ. Բրուտեան, Օրացոյց Հայոց, Ս. Էջմիածին, 1997, էջ 149-151:

² Ղ. Ալիշան, Հին հուսարք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 130-131:

³ Գ. Սիմոնյան, Անկաստեղ, Աստվ. ֆակ. Տարեգիրք, Եր., 2017:

⁴ Տե՛ս Գ. Սիմոնյան, նշվ. աշխ.:

Մինչ այդ տոմարական եզրի լեզվաբանական-ստուգաբանական, դիցաբանական քննություն կատարելը, ամրագրենք դրա՝ տոմարին առնչվող առանձնահատկությունը, այս դեպքում՝ հաստատուն կապը **մայիսի 24 = մարտի 17 (սարկավագադիր անշարժ տոմարի) ամիս-ամսաթվի** հետ, որն էլ նրան կապում է «**ԵՐԿՎՈՐՅԱԿ**» կենդանակերպի կամ տանուտերի հետ (մայիսի 21-ը = մարտի 14-ից մինչև հունիսի 20-ը = մարգաց 14-ին):

Տոմարական կամ օրացույցային դիցաբանությունը ևս կարող է մեզ օգնել այս խնդրի պարզաբանմանը, այդ իսկ պատճառով քննենք առաջին հերթին երկվորյակների հարցը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիցաբանությունն իրականության արտացոլման հնագույն ձևերից է, և «Ոչ թե բնությունը, այլ հասարակությունն է առասպելի իրական մոդելը: Նրա հիմնական մոտիվները մարդու հասարակական կյանքի պրոյեկցիաներ են»¹, մեր ոսկեդարյան գրականության մեջ կարևորենք որոշ դիցաբանական իրողություններ: Նշենք նաև, որ դիցաբանությունը ունիվերսալ բնույթ ունի, և այն կարելի է մեկնել տարբեր տեսանկյուններից. մեզ հատկապես հետաքրքրում է տոմարականը:

Հայոց վիպասանքում առկա առասպելական իրողություններին բազմակողմանիորեն անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ՝ Մ. Աբեդյան,² Ս. Հարությունյան³, Ա. Պետրոսյան⁴, Տ. Դալալյան⁵ և այլք:

Քանի որ «Ելաստղը» «**ԵՐԿՎՈՐՅԱԿ**» կենդանակերպին է զուգադիպում, սկսենք հայոց երկվորյակներից՝ նշելով, որ մեր խնդրից դուրս է երկվորյակությունը իբրև առասպելային ամբողջության մեջ մեկնելը: Սակայն որոշ հարցեր, բնականաբար, կշռափվեն, քանի որ երկվորյակային առասպելները լայնորեն տարածված են ողջ աշխարհում, և դրանք

¹ **Дюркейм Э.**, Элементарные формы религиозной жизни, Мистика, Религия, Наука, Классики мирового религиоведения. Антология, М. 1988, с. 181: Տե՛ս նաև **Գ. Սարգսյան**, Դիցաբանություն (դիցաբանական ակնարկներ), Եր., 2019, էջ 119:

² **Մ. Աբեդյան**, Երկեր, հ. Ա. Եր., 1966:

³ **Ս. Հարությունյան**, Բնագիտական ակնարկներ, Ե., 2010:

⁴ **Ա. Պետրոսյան**, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգաձագման խնդիրը, Եր., 1997:

⁵ **Տ. Դալալյան**, Հայոց վիպական Սաթենիկ թագուհու ծագումնաբանության շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, 2002, էջ 191-213:

կապված են հենց «**ԵՐԿՎՈՐՅԱԿ**» կենդանակերպին: Աստղային առասպելները աստղերն ու առասպելները ներկայացնում են կենդանիների տեսքով, երբեմն կարող է արտահայտվել կենդանիների որսին¹:

Երկվորյակ հերոսների վերաբերյալ առասպելային տարածված է հայ հին և ժողովրդական ավանդությունում: Մեզանում հանդիպում են զանազան երկվորյակներ՝ Սանասար-Բաղդասար (Ադրամելեք, Արգամոզան), Մամիկ-Կոնակ, Դեմետր-Գիսանե, որոնք հանդես են բերում և՛ տարբերություններ, և՛ ընդհանրություններ: Նրանք տարբերվում են եկած վայրերով՝ Ասորեստան, Ճենաց աշխարհ-Պարսկաստան, Հնդկաստան, սակայն ընդհանրություններ են հանդես բերում իրենց էական գործունեության դեպքում և Հայաստան փախչելու ու այնտեղ իրենց իշխանությունը հիմնելու խնդրում: Այս երկվորյակները բոլորն էլ ապստամբել են իրենց հայրերի իշխանության կամ երկրների թագավորների դեմ և, գալով Հայաստան, միևնույն տարածքի վրա են տեղավորվել: Ս. Հարությունյանը գրում է. «Հետաքրքրական է, որ նշված առասպելաբանական շարքը հին ժամանակներից մինչև մեր դարերը, կապվում էր որոշակի աշխարհագրական միջավայրի՝ Սասունի և Տարոնի հետ, որոնք հաճախ կազմում են միասնական վարչական, ինչու չէ նաև հնում էթնոմշակութային միություն (իմա՝ Արմե-Շուպրիա երկիրը)»²: Այս երկիրն գտնվում էր Ասորիքի հարևանությամբ: Ուսումնասիրողները ասորական են համարում Սիպպար տեղանքը, որը դրված է «**ԽԵՑԳԵՏԻՆ**» կենդանակերպի տակ, սակայն, ինչպես փաստում են միջնադարյան տոմարական բնագրերը, որոնք Պլատոնից արված ընդօրինակություններ են, «**ԽԵՑԳԵՏԻՆ**» կենդանակերպը զուգադրված է Հայքին³: Կարելի է ասել, որ ասորական աղբյուրների Սիպպարը հայոց Շուպրիան է: Տոմարագիտական տեսանկյունից այստեղ առկա են «**ԵՐԿՎՈՐՅԱԿ**» ու «**ԽԵՑԳԵՏԻՆ**» իրարահաջորդ կենդանակերպերը:

Հայոց վիպասանքի կարևոր կերպարներից են նաև մյուս երկվո-

¹ Астральные мифы, Мифы народов мира, (հետայսու՝ МНМ) энциклопедия, т. 1, М., 1987, с.116-117.

² Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 134-137:

³ Հ. Բաղայան, Օրացույցի պատմություն, Ե., 1970, էջ 144-145 (ծեռ. թվ^{որ}1973 թ. 76, ձեռ. թվ^{որ}1973 թ. 77ա):

րյակները՝ **Երվանդը և Երվազը**¹: Նրանք թեև Արշակունյաց ցեղից էին, սակայն ապօրինի ծնունդ: Նրանք ծնվել են խառնակ ամուսնությունից՝ ցուլից²: Միմյանց փոխլրացնող անձեր են, Երվանդը քաղաքական իշխանության կրողն է, Երվազը՝ հոգևոր: Այլաբանորեն նրանք «մարմին» և «հոգի» կրոնական հարաբերությունն են արտահայտում:

Երկվորյակների ցուլից ծնվելը կարող ենք համարել տոմարական իրողություն: Այսպես, կենդանակերպային շրջանում **«ՅՈՒԼ»** կենդանակերպին հաջորդում է **«ԵՐԿՎՈՐՅԱԿ»**, սակայն իր տանուտերության ժամանակ անմիջապես էլ երկնքից անհետանում է, և իր փոխարեն երկնքում հայտնվում է **«ՎԻՇԱՊ»** կենդանակերպը, այդ իսկ պատճառով լիովին ճշմարիտ է հնչում միստերիաների բանաձևը՝ «ցուլը ծնեց վիշապ»³: Եվ բոցաշունչ վիշապի երկնքում հայտնվելով է, որ ամռանը սպառնալիք է դառնում երաշտը, քանզի, ըստ դիցաբանական պատկերացումների, փակվում է երկնային ջրերի ճանապարհը, այլաբանորեն՝ նաև ըստ տոմարական իրողության: **«ԵՐԿՎՈՐՅԱԿ» կենդանակերպը 2/3-ով համապատասխանում է ամառ եղանակին, բնականաբար, անձրևների բացակայությունը և ջրի պակասն ու անհետացումը միանգամայն օրինաչափ է:**

Դառնանք վիպասանքին: Սանատրուկի ժամանակ Երվանդը վերակացու և առաջնորդ դարձավ և իր առատաձեռնությամբ բոլոր նախարարներին իր կողմը գրավեց: Սանատրուկի մահից հետո դարձավ ոչ օրինական թագավոր, քանի որ նրան Բագրատունիները չէին թագադրել (ճիշտ և ճիշտ դիցաբանական կառույց՝ ինքնակոչ կամ կեղծ թագավոր): Իբրև մշակութային հերոս կառուցում է Երվանդաշատ քաղաքը, կուռքերի քաղաք Բագարանը, Երվազ եղբորը նշանակում է քրմապետ, տնկում **Ծննդոց անտառը, որը պարսպապատում է և այնտեղ արգելափակում արագավազ այծյամներ, եղնիկներ, եղջերուների ցեղեր, ցիռեր, վարազներ..... ևն**⁴:

Դիցաբանության տեսանկյունից հետաքրքիր է **անտառ** տնկելը: Դի-

¹ Արտաշեսն ու Մաժանը ևս կարող են դիտվել երկվորյակներ, եթե Մաժանի անունը ստուգաբանվի, որպես մշուշ (հմմտ, բարբառային մըժ):

² Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 139:

³ Նույն տեղում, էջ 140:

⁴ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն (աշխարհաբար), Եր., 1961, էջ 193-197:

ցաբանորեն անտառը մարդուն թշնամի տարածք ու թշնամի ուժերի հավաքատեղի է՝ կապված կենդանական աշխարհի հետ, որտեղ գտնվում է ստորերկրայքի մուտքը և դեպի այն տանող ճանապարհը: Սա համապատասխանում է միջին աշխարհին՝ երկինք –լեռ - ջուր եռամաս կառուցում: Բնակեցված է կենդանակերպ ոգիներով, օր., արջ և վերոբերյալ կենդանիները:

Երկվորյակային միջերում հրաշքով ծնված երկվորյակ երեխաներին քշում են անտառ՝ իրենց ծնունդին համապատասխան վայր, որը հակադրված է կանոնակարգված տարածքին՝ «տիեզերքին»¹: Իբրև միջին աշխարհ՝ կապված է նաև վերին աշխարհի հետ, որի ցուցիչը անտառի՝ **Ծննդոց անունն է**, ասես կապ է ստեղծվում **հարության** գաղափարի հետ, իսկ այնտեղ արգելափակված կենդանիները հիմնականում եղջերվազգիներ են, այսինքն եղջրավորներ, բացի **ցիտերից** (վայրի **էշեր**), իսկ դրանք էլ աստղագիտական տեսանկյունից կարող են վկայել ամառային արևադարձի մասին, այն է՝ «**ԽԵՑԳԵՏԻՆ**» կենդանակերպի մասին, որտեղ գտնվում է ամառային արևադարձի կետը, և որի կազմում են «**մսուրի մոտ գարի ուտող իշուկներ**» կոչվող աստղերը²: Հայաստանը աստեղնալից երկնքի աշխարհագրական քարտեզներում համապատասխանել է հենց «**ԽԵՑԳԵՏԻՆ**» կենդանակերպին, այդ իսկ պատճառով միանգամայն հասկանալի և ընդունելի է, որ էշը հայոց մեջ եղել է տոտեմական կենդանի և պաշտվել, հատկապես որ դրա հետ են կապել անձրև բերելու հավատալիքներ: Օր., Խարբերդի շրջանում հավատում էին, որ տեղի լճի կղզու վրա կառուցված վանքում ոսկեփայլ քուրձով էշ է թաղված, իսկ Վանի շրջակայքում էշի գլուխը լվանալով անձրև են ակնկալել³: Էշի հետ կապված հավատալիքը, որպես երգիծանք, պահպանվել է մինչ օրս մեզանում, այն է՝ երբ մեկը լոգանք է ընդունում, ապակի է լվանում կամ որևէ այլ բան, որից հետո անձրև է գալիս, ասում են՝ էշ են լողացրել⁴:

¹ МНМ, т. 2, М., 1988, с. 49-50.

² Ս. Ներսիսյան, Աստղալից երկինք, Երևան-Արմավիր, էջ 74:

³ Տե՛ս Պ. Բարսեղյան, Վաղ հավատալիքներն ու դիցաբանությունը Հայաստանում, Եր., 2015, էջ 54-55 (Է. Չելեբի, Օտար աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին, հ. 4, Եր., 1967, էջ 161, Գ. Սրվանձոյանց, Երկեր, հ. 1, Եր., 1978, էջ 163):

⁴ Սրա կրողներից եմ նաև ես, որ նախկինում չեմ իմաստավորել: Լսել եմ Ուջան գյուղում սասունցիների ժառանգներից (Գ. Սիմոնյան):

Իսկ **վարագը**, ինչպես կտեսնենք, «ՄԵԾ ԱՐՋ» կամ «ՇԵՐԵՓ» համաստեղության անվանումներից է:

Մովսես Խորենացին շարունակում է. «Բայց ասէն զԵրուանդայ ըստ հմայից դժնեայ գոլ **սկան հայեցուածով**. վասն որոյ ընդ **այգանալ** աչալրջացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ, և ի հայեցուածոցն դժնութենէ ասեն պայթել որձաքար վիմացն: Բայց այս կամ եղիցի սուտ և առասպել, և կամ դիւականս ինչ առ իւր ունել զօրութիւնս, զի այսպէս հայեցուածոցն անուամբ վնասեսցէ զորս կամի» (Խոր. Բ. ԽԲ):

Թեև Երվանդի չարակնության ու մահաբեր հայացքի մասին պատկերացումը բանահյուսական արտահայտություն է, սակայն այդ դեպքում՝ Երվանդի աչքը դիցաբանական խորհրդանիշ է, որը կարող է նշանակել, թե ինքը տեսնում է, սակայն իրեն չեն տեսնում¹: Տոմարագիտական տեսանկյունից հստակորեն այս հատվածից կարելի է հետևեցնել, որ Երվանդը կապված է հայոց տոմարի ցերեկային առաջին՝ **այգ** ժամի հետ, որը ամառային արևադարձի շրջանում համապատասխանում է 3³⁰ – 4³⁰ ժամին²: Աշխարհաբար թարգմանության մեջ թարգմանիչը բաց է թողել ժամանակացույց և ծիսական ամենակարևոր բառը՝ փոխարինելով դրա հոմանիշով՝ **առավոտյան արշալույս**³, որն այս առումով միանգամայն սխալ է: **ԱՅԳ** -ը ծիսական նշանակությամբ բառ է (նորապսակ հարսն ու փեսան (այլաբանորեն Արևն ու Լուսինը) բարձրացել են տանիքն ու ողջունել նրան⁴ . «Էգ բարև...»: Այգը այնպիսի **լուսատու (աստվածություն) է**, որին Արևն ու Լուսինն էլ են ողջունել կամ երկրպագել: **ԱՅԳը** ծիսական առումով կապված է ժամանակային առումով **մահվանը** հաջորդող առաջին օրվա հասկացության հետ, որից սկսում է հաջորդ օրը (էգուց): Հաջորդ օրը **այգողքի** ձեսի ժամանակ Սեբաստիայում թխել են հատուկ հաց՝ **ագողահաց**⁵: Այգուց կարգի ժամանակ տրվող հացը կոչ-

¹ Глаза, МНМ, т. 1, с. 306-307:

² Ըստ Ռ. Վարդանյանի քննության՝ գարնանային օրահավասարի ժամանակ այգ ժամը համապատասխանում է 6³⁰-7³⁰ եղած ժամանակահատվածին: Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, Եր., 1999, էջ 155:

³ **Մովսես Խորենացի**, նշվ. աշխ., էջ 198:

⁴ Էգ, բարև,նն, որից բխում է, որ սա հզոր, արևանման լուսատու է և ոչ թե Արևը, քանզի ամառային արևադարձի ժամանակ այդ ժամին Արևը չէ, որ ծագում է:

⁵ **Հր. Աճառյան**, ՀԱԲ, հ. Ա, էջ 165:

վել է նաև **հոգեհաց**, որը տրվել է մահացածի **հոգու փրկության** համար: Թեև այդ հոգեհացը այժմ այլ իմաստ է ձեռք բերել, սակայն հիմքում հենց **հացի** գաղափարն է: Թեև այս հացի ձևի մասին տեղեկություն չկա մեզանում, սակայն դրան կհանդիպենք հետո, երբ կքննենք Սաթենիկի հետ կապված խնդիրները: Մյուս կողմից էլ՝ շատ հստակորեն Երվանդի դժնի աչքը, որից քարերն էին նույնիսկ ճաքում, հայտնվում էր **այգ** ժամին, ուղղակիորեն զուգահեռաբար է Անանիա Շիրակացու հիշատակած **Այգաստղին**¹, որը «**Երուանդի աչքն**» է: Թարգմանության մեջ բաց է թողնված **աչալուրջները** բառը, որը ևս այլաբանորեն աստղերի ցուցիչ կարող է համարվել:

Չար աչքի հավատալիքը մինչ օրս պահպանված է հայոց մեջ, իսկ դրանից արտոն ու այգին պահպանելու համար եզի, եղջերվի կամ այծյամի գանգ էին տնկում ցցի վրա²: Սա նշանակում է, որ աչքը եղել է այս կենդանիներից մեկինը, ինչպես ասում են՝ սեպը սեպով են հանել, ստեղծել են այդ կենդանիների հայելային պատկերը³:

Անհավանական զուգահեռությամբ այդպիսի սպանիչ հայացք ունի աֆրիկյան այծքաղը (անտիլոպը)՝ Կատովդեպսը, որ «կոչվում է վայրահայաց, որ հուրը բերանով երկրի վրա է թափում ու սպանում է իրեն տեսնողներին»⁴: **Երվանդին անուղղակիորեն երկնային այծքաղ կարող ենք համարել:**

Վիպասանքում Արտաշեսի դեմ կռվի ժամանակ Երվանդին օժանդակում է **Մուրացյան Արգամը**, որ իր տիրապետության տակ բազմաթիվ տեգավորներ ուներ: Ըստ Մուրացյան Արգամի անվան ստուգաբանության՝ Երվանդին օգնում են «օձ - վիշապները»⁵ **ստորերկրայքի դիվական ուժերը**: Վիշապը, ըստ հնդեվրոպական առասպելաբանության, կենարար ջրերի ճանապարհը փակողն է. որոտաբեր աստվածության հա-

¹ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 165:

² Ս. Հարությունյան, Հավատալիքներ, հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Եր., 2006, էջ 21:

³ Ուղղակիորեն հիշեցնում է **Գորգոն մեղուզայի** առջև հայելի պահելու և դրանով նրան չեզոքացնելու առասպելությունը կամ **արծվի դստեր** հայացքը, որը մոխրացնում էր ամեն բան: Глаза, МНМ, т. 1, с. 307:

⁴ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 2, Ե., 1973, էջ 539:

⁵ Մուրացյան տոհմանունը ծագել է մար «օձ» բառից, իսկ Արգամի մասին ասվում է, որ վիշապագուն էր:

կառակորդը: Վիշապին «փերթփերթելուց» հետո միայն հազարավոր մանր օձերի տեսքով անձրև է տեղում¹: «Իսկ մարաց զորքերը Երվանդի գնդի կողմն անցնելով՝ մթության մեջ բանակ են դնում դիակների վրա»²: Դիակներն այստեղ անդրաշխարհի պարզ ցուցիչն են, որից ևս մեկ անգամ հիմնավորվում է Երվանդի ու Արգամի՝ անդրաշխարհի հետ կապը: Երվանդի դաստակերտը հետագայում Արտաշեսը վերանվանում է **Մարմետ** (Մար ամատ - «Մարը եկավ»)՝ նկատի ունենալով իրեն, քանի որ Արտաշեսին Երվանդը մար («օձ») էր անվանում: Այլ տարբերակի համաձայն՝ կառուցում է քաղաք, որ կոչվում է Արտամատ («Արտաշեսի գալուստ»)՝³: Այստեղ Արտաշեսը կանգնեցնում է Աստղիկ դիցուհու կուռքը, որին երկրպագում էր Սաթենիկը, երբ ամառ և աշուն գնում էր զբոսնելու: Սաթենիկը պաշտում էր Աստղիկի պատկեր անվանված կուռքերին⁴: **Ամառ և աշուն** եղանակների մասին հաղորդումը պարզապես ցույց է տալիս, որ **Սաթենիկը** հայոց մեջ կապված է **Ամառային-աշնանային եռանկյունու հետ, այսինքն նա, որպես աստղ, շաղկապված է այդ եռանկյունուն (աստղագիտական բնութագրերը կտրվեն ավելի ուշ)**:

Արտաշեսը, որ «արծիվ» էր, ինչպես կտեսնենք, փաստորեն, իր երկնային բարձունքներից կարող է իջնել ստորերկրայք, փոխակերպվել օձի, երբ հայտնվում էր անդրաշխարհում: Մեր ժայռապատկերներում հանդիպում են այսպիսի թռչուններ, որոնց պարանոցը փոխակերպված է օձի:

Երվանդի չար աչքի զորությունը գործում է միայն **այգի** ժամանակ, երբ դեռևս լույսը չի բացվել, այսինքն այն ասես **Լուսաստղն է (Արուսյակը)**: Իսկ քարերի ճաքելու առասպելաբանությունը կարող է կապված լինել միայն ամռանը դաժան **երաշտի** հետ, որից ոչ միայն հողն է ճաքում, այլև որձաքարը: Եվ այստեղ այլաբանությունը միանգամայն հասկանալի է:

Օրինական թագավորը՝ **Արտաշեսը**, հաղթում է. վաղրով (կարճ թուր) խփում են **Երվանդի** գլխին և ուղեղը ցրում հատակին, սպանելով նրան **այնպես**, ինչպես օձին՝ գլուխը ջախջախելով: Պատժում են նաև **Երվազին**, պարանոցից **երկանաքար կապելով գցում են գետը**⁵ (հմմտ.

¹ Индоевропейская мифология, МНМ, , т. 1, с. 528:

² Մ. Խորենացի, նշվ. աշխ, էջ 202:

³ Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Եր., 1978, էջ 75:

⁴ Նույն տեղում:

⁵ Մ. Խորենացի, նշվ. աշխ,(աշխարհաբար), էջ 204:

(**հմմտ. Շամիրամի հետ**): **Երվանդ** անունով մի թագավորի մասին ասվում է, որ դեերից **կապվեց «ի գետս և ի մռայլս»**¹: Երվազի և Երվանդի մահապատիժը ծիսական զոհաբերություն է: Երկվորյակի զոհաբերությունն ասես Աստղիկ դիցուհու² Արաձանի գետում լողանալու ու մշուշի մեջ թաքնվելու տարբերակն է, որովհետև «**ի մռայլս**» բառը այստեղ ոչ թե գետի մակդիրն է, այլ առանձին հասկացություն, այն է՝ **մեզ, մշուշ**:

Արտաշեսը, նկատի ունենալով, որ Երվանդը մասամբ Արշակունի է, նրա **մահարձանն**³ է կանգնեցնում: Մեր կարծիքով, **Երվանդի մահարձանը** վիշապաքարերի մասին կարևոր հիշատակություն է: Ըստ վիպասանքի՝ **Երվանդի – Երվազի մահարձան** վիշապաքարը, Աստղիկ դիցուհու պաշտամունքային արձաններից է: **Վարդամատն** Աստղիկ դիցուհու լողանալը Արաձանիում և մշուշի ներքո պատսպարվելը հիշեցնում է անձրև կապելու և անձրև բերելու ծիսակատարություն: Նույնիսկ **վարդամատն** մակդիրը, որ տրված է Աստղիկին, գուցե նշանակում է վարդ՝ «ջուր» և ամատա «եկավ»՝ «անձրև եկավ»՝ անձրևաբեր իմաստով: Սա նույնական է ջրերի ակունքը փակած վիշապին, գետերին աղջիկներ զոհաբերելու ծեսերի հետ՝ անձրև բերելու նպատակով: Վիշապի առկայությունն այս պարագայում թույլ է տալիս մտածելու, որ գործ ունենք աստղագիտական պատկերացումների, այն է՝ «**ՎԻՇԱՊ**» համաստեղության հետ, որը աստղալից երկնքի կարևոր կենդանակերպերից է: Մ.թ.ա. 3000 թվականին «**ՎԻՇԱՊ**» համաստեղության Տուբան աստղը եղել է հյուսիսային բևեռային աստղ և այդպիսին կլինի 23000 թվականին⁴: «**ՎԻՇԱՊ**»-ը երկնքում շատ լավ է երևում մայիսից մինչև նոյեմբեր⁵:

¹ **Եղիշէ**. Հարց 51, տե՛ս և Մառ, ամառն. ուղևորութ. Վիեննա, 1892, էջ 14 - **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. 2, էջ 145:

² Այստեղ **Եվանդ-Երվազի** արական կերպարի կողքին իգական **Աստղիկին** ներկայացնելը միանգամայն բնական է, քանի որ Աստղիկը Սասնա ծոերում արական է՝ **Աստղիկ պարոն** է:

³ Անձրև կտրելու հմայություններից է եղել գերեզմանաքարերը (քարերը, սրբի արձանը) գետում լվանալը, որին անպայման մասնակցում էր որևէ առաջնեկ, որն այդ ընթացքում պետք է շան նման հաչեր: Տարբեր ժողովուրդների անձրև բերելու ծեսը կապված է եղել քարը թրջելու կամ գետի, աղբյուրի ջրում թաթախելու հետ: **Զ. Ֆրեզեր**, Ոսկե ճյուղը, Եր., 1989, էջ 93-95:

⁴ **Ս. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 25:

⁵ Նույն տեղում, էջ 34:

Գետը՝ իբրև կյանքի ու մահվան, աշխարհի ու անդրաշխարհի սահմանագիծ, հանրահայտ դիցաբանական մոդել է: Եվ, ուղղակիորեն, Երվանդն ու Երվազը անդրաշխարհի ներկայացուցիչներ են:

Հայոց թագավորն անպայման պետք է լիներ **Արտաշեսը**, ինչպես հետո կտեսնենք, **արծիվը (երկնային թագավոր)**, որը պետք է հաղթեր անդրաշխարհի ներկայացուցիչներին՝ **օձ-վիշապներին**: Մահապատժի ժամանակ **երկանաքարի** կիրառումը ուղղակի հիշեցնում է Սասունցի **Դավթին**, որը թշնամու դեմ կռիվ է գնում **ջաղացքարերով (հմմտ. Աստվածաշնչային Դավիթ թագավոր)**: Հայտնի է, որ որոտաբեր աստծու զենքն է քարը: Ուստի պատմա-վիպական հերոսը՝ Արտաշեսը, հայոց որոտաբեր աստվածության փոփոխակն է:

Հայոց երկվորյակներ **Երվանդի ու Երվազի** մասին վիպական պատմությունը հուշում է, որ առասպելաբանորեն այս երկվորյակները կապված են **անդրաշխարհի, առասպելական օձ-վիշապների, ինչպես և եղջերվազգիների, այծյամների, դիվական զորության՝ երաշտի, ինչպես և որոշակի համաստեղությունների ու աստղերի** հետ:

Շարունակենք երկվորյակների քննությունը՝ ստուգաբանելով նրանց անունները:

ԵՐՈՒԱՆԴ- պահլավերենով arvand=զենդ. Aurva¹-, նշանակում է «արագ», «քաջ», համեմատ. սանսկ. aurvant «արագընթաց (ծի)», «քաջընթացիկ»²:

Երվանդի անվան ստուգաբանությունը հիմնավորվում է նաև Մովսես Խորենացու տեղեկությամբ, այն է՝ Երվանդը ծիով շատ ասպարեզներ անցնելով,նորանոր ձիեր հեծնելով փախչում էր իջևանից իջևան³:

Ս. Հարությունյանը այս անունը առնչում է հնդեվրոպական որոտաբերի Պերուն անվան հետ⁴: Մեր կարծիքով, այն նման է հնդկական դիցաբանության Պառվաթի անվանը, ով Շիվայի կինն էր: Շիվան ուներ 3 աչք, որով փորձում է այրել Պառվաթին: Շիվայի առաջին կինը՝ Սաթին էր, ով սրբազան կրակով այրում է իրեն, հետո վերածնվում է Պառվաթի կերպարով⁵:

¹ **Aurva, Aurvant** անունների **Aur** մասը թվում է, թե կապված է «**ԿԱՌԱՎԱՐԻ**» լատինական **Auriga** անվան հետ:

² **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. 2, էջ 145:

³ **Մ. Խորենացի**, նշխ. աշխ., էջ 201:

⁴ **Ս. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 126:

⁵ **MHM**, տ. 2. c. 286:

ԵՐՈՒԱԶ – անունը չի ստուգաբանվում, սակայն իրանական ծագում ունի:¹ Հնարավոր է որ այդ անվան **ԱԶ**-ը նշանակի **ԱՅԾ**²՝ համանմանությամբ պարսկերեն ***gav-az-(na)** (ցուլ- այծ- Գ. Ս.), որ նշանակում է եղջերու: Անունը դիտենք, որպես **երէ-այծ: Երվազին զուգահեռ է դիտվում Արտավազդ անունը², իսկ Արտավազդը սերում է վիշապներից:**

Արտաշեսն ինքը երկվորյակների պաշտամորդ է, քանի որ Արտաշատ մայրաքաղաքը կառուցելուց հետո անմիջապես մեհյան է կառուցում և Բագարանից այնտեղ տեղափոխում Արտեմիսի արձանը³, իսկ նրա երկվորյակ եղբոր՝ Ապոլոնի⁴ արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս՝ ճանապարհին մոտ⁵: Ըստ առասպելի՝ **Ապոլոնը** տոմարական ու աստղագիտական մի քանի հասկացությունների հետ է կապված, այն է՝ Լուսնի լրման 19-ամյակի, ամառվա, «**ԿԱՐԱՊ**» ու «**ՄԵԾ ԱՐՋ**» համաստեղությունների:

Ուշադրություն դարձնենք նաև արքայի, քաղաքի ու աստվածուհու Արտաշես, Արտաշատ, Արտամատ ու Արտեմիս անունների ընդհանրությանը՝ **ԱՐՏ**⁶-ը: Եթե դիտարկենք իբրև հայերեն արմատ, ապա **ԱՐՏ**-ը, որպես հող, երկիր գետին, մարգագետին առասպելական վայր (և՛ տեղ, և՛ ժամանակ) է, ուր արածում են նախնիների **հոգիները**: Մյուս դեպքում էլ համազոր է բաց, տար, ապ, ի դուրս, արտաքս ևն⁷ իմաստներին և դուրս գտնվելու իմաստ է ձեռք բերում: Սակայն ավելի հավանական է այն պարսկական դիցաբանությամբ բացատրելը (ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ԵՂՆԻԿ, ԱՐՋ), քանի որ անմիջականորեն վկայում են, որ գտնվում են

¹ Նույն տեղում, էջ 144:

² Նույն տեղում:

³ Թովմա Արծրունու մոտ կարդում ենք. «Եվ **երեք մասի ճյուղավորված**, փոքր ու գոգաձև հովտում, որ սկսում է **երեք բլուրներից**կառուցեց աշտարակ և նրա վրա կանգնեցրեց **Աստղիկի** պատկերը»: Պատմություն Արծրունյաց տան, Եր., 1978, էջ 75:

⁴ Ապոլոնը ժամանակ առ ժամանակ կարապետ լծած կառքով հեռանում է իրեն սիրելի երկիր՝ Հիպերբորեա, որ սահմանված ժամանակին՝ ամառային շոգին, 19 տարի մեկ վերադառնա Դելֆի: *MHM*, տ. 1, ց. 304:

⁵ Նույն տեղում, էջ 205:

⁶ Ձենդ Ավեստայում **Արտան՝ ճշմարտությունը, եղնիկի հովանավորն** է: Եղնիկը մայրիշխանության շրջանում աստվածացված կենդանի է և դրա խորհրդանիշ, կապված է Օձի հետ, որոնց հայրիշխանության ժամանակ փոխարինել են բազեն ու արջը: Համակարգչ.

⁷ Նոր բառգիրք հայերեն լեզուի (հետայսու՝ ՆԲՀԼ), հ. Ա, Եր., 1979, էջ 375:

մեր հետաքրքրությունների ոլորտում՝ **Արտեմիսին համարել են «արջային աստվածուհի, տիրուհի, մարդասպան», եղբոր հետ տրոյական պատերազմում տրոյացիների կողմում էին**¹:

Մեր դիտարկումով՝ Տրոյան ամառային – աշնանային եռանկյունն է, և Հեղինեն ինքը Աստղիկի մարդեղացած զուգահեռն է:

Արտաշեսի անունը հին պարսկերենով ստուգաբանվում է «արդարությամբ իշխող»²:

Կարծում ենք, որ **ԱՐՏ** արմատը կարելի է առնչել նաև **վայրի ոչխարի՝ արտիկ անվան ԱՐՏ արմատին**, մանավանդ որ այս կենդանին, երկվորյակներ է ծնում (Բարսեղ Կեսարացի, Վեցօրյա «Այծքաղք և արտիկք բազում անգամ երկուորեակս ծնանին»³):

Շարունակենք երկվորյակության քննությունը: Դիտարկենք երկվորյակների մասին հունական առասպելը: Դիոսկուրները՝ Պոլլուքս-Պոլիդեկն ու Կաստորը բազմաթիվ սխրագործություններ են կատարել, մասնակցել են արգոնավորդների արշավանքներին⁴, որի նպատակը Ար-Արգոսում վիշապի պահպանության տակ գտնվող ոսկե գեղմը բերելն էր, նրանք ազատում են իրենց քրոջը՝ **Հեղինեին** (Ելենա), ում փախցրել էր Թեսևսը: Սա նույն Հեղինեն (անունը հունարենից թարգմանաբար նշանակում է «**եղնիկի ձագ**») է. նույն անձն է Պարիսի սիրեցյալը, ում փախցնում է **Տրոյա՝ Իլիոն**:

Հունական առասպելում երկվորյակները կապված են **ոսկե գեղմի, եղնիկի ձագի** հետ, որ **Հեղինեն է**, նա տարվում է **Իլիոն՝ Տրոյա**, ինչպես և **վիշապի հետ**:

Ելաստեղի ամսաթվային նշումը մայիսի 24-ին և կապը «ԵՐԿՎՈՐՅԱԿ» կենդանակերպի հետ թույլ են տալիս հարաբերակցել նաև Հռոմ քաղաքի հիմնադիրներ՝ երկվորյակներ Ռոմուլի և Ռեմայի մոր՝ Ռեա Սիլվիայի հետ, որն ունի երկրորդ անունը՝ Իլիա (= Եղիա), ով, ավանդազրույցներից մեկի համաձայն, Անխիսի (Անգաստո) և Վեներայի որդի էնեսաի դուստրն է: Ըստ երկրորդի՝ Ալբա-Լոնգ-Նումիտոր քաղաքի

¹ МНМ, т.1, с. 107.

² Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 1, էջ 305:

³ Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 343:

⁴ Արգոնավորդների արշավանքների կարևոր նպատակը «ոսկե գեղմը» ձեռք բերելն էր, որը պահպանում էր վիշապը:

արքաներից մեկի դուստրն է, ում հոր մահից հետո արտաքսել են քաղաքից, իսկ իշխանությունը զավթել է փոքր եղբայրը՝ Ամուլին (Ամ – ամիս – Լուսին ?):

Ռեա-Սիլվիան՝ **Իլիան**, արքայադուստր է, ում **արտաքսել են** քաղաքից (համեմ. երկնքից Արուայակին վտարելու իրողության հետ): Ըստ հռոմեական միջերի, **նա Վեներան չէ**, այլ նրա որդի էնեասի դուստրը, թեև ծագումնաբանորեն սերում է **Վեներայից**:

Իլիան կապված է ընտանեկան օջախի հետ. նա եղբոր հրամանով դատապարտվել է կուսության (վեստալուի էր), և 30 տարի պետք է ծառայեր Վեստային¹:

Սակայն ունեցել է երկվորյակներ, որոնց հայրը համարվել է կա՛մ Մարսը, կա՛մ Ամուլին²:

Միջի պատումներից մեկի համաձայն՝ Իլիային գցել են **Տիբր գետը**, ինչպես հայոց երկվորյակներից մեկին՝ Երվազին, բայց Ռեա Սիլվիան փրկվել է:

Արդյոք Իլիա անունը կարելի է համադրել օձի հետ, սակայն նշենք, որ թուրքական անվանումը Գողթնի մի լեռան Իլանլու և Իլանդաղ նշանակում է «օձալեռ»³: Եվ օձերը կապված են **Սև** և **Մուգ** լեռների հետ (Մասիս, որ ունի **ազատ** էպիտետը)⁴:

Կարևորենք, որ Իլիան մայրն է հռոմեական երկվորյակների, որոնք ապօրինի կապից են ծնվել, ինչպես Երվանդն ու Երվազը, նրանց մորը գցել են գետը՝ ինչպես Երվազին:

Ինչպես տեսնում ենք, երկվորյակների մասին առասպելներում կարևոր են ոչ միայն հատուկ անունները՝ **Երվանդ-Երվազ, Հեղինե, Ելենա, Իլիա, Արտաշես** անունները, որոնց արմատներն են **ԵՐ⁵ - ԵՂ - ԵԼ (ԻԼ), ԱՐՏ**, այլև **անտառ-անդրաշխարհի ու գետ-սահմանի, ինչպես նաև հոգու** հետ կապված լինելը: Այս բոլոր անուններին բնորոշ է ամռան, երաշտի ու դրա հետ միաժամանակ աստղագիտական պատկերացումների հետ ընդհանրությունները կամ նույնականությունը՝ Այգաստը,

¹ МНМ, т. II, с. 379.

² Նույն տեղում:

³ Առասպելականը վիպասանքի մեջ, **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Ա, Եր., 1966, էջ 136:

⁴ Նույն տեղում:

⁵ ԵՐ արմատը չի բացառվում, որ նույնն է, ինչ երեի՝ արմատը: Երե - կենդանի, որ եղջերուների հետ արածում: Հմմտ. երինջի, որ դեռևս չծնած կովն է:

Վիշապ, Արծիվ, Ամառային եռանկյուն: Ինչպես և որոշ կենդանիների հետ համադրելիությունը՝ վայրի ոչխար, եղնիկ կամ նրա ձագ (հորթ կամ ուլ), օձ, արծիվ ևն, որոնք ևս աստղերի ցուցիչներ են¹: Երկվորյակների հետ կարող է գործել նաև երրորդը, որն էլ հենց պետք է «ԵԼԱՍՏԵՂը» խորհրդաբանի:

* * *

Քանի որ «**Ելաստեղ**» անունը Հովհաննես Սարկավագն իր «Ազգաց ազնուականոններում» դրել է այն հատվածում, որտեղ նշված են տոների անվանումներ, աստղագիտական երևույթներ ևն, այդ իսկ պատճառով, ներկայացնենք «**ԵՐԿՎՈՐՅԱԿ**»-ի ժամանակ եղած որոշ տոների՝ Ելիկոնիդայի, աստվածաշնչային **Եղիայի**, **Եղիսեի** հետ կապված հարցերի քննությունը, քանի որ **ԵՂ** արմատը կարելի է առնչել ինչպես այդ սրբուհու, այնպես էլ Եղիայի տոնի, դրան նախորդող Եղիական կոչվող պահքի ու **Եղիսեի** անունների հետ:

Յայսմաուրք վկայաբանական ժողովածուն մայիսի 29-ի ամսաթվով հիշատակում է «Վկայութիւն սրբուհոյ կուսին Ելիկոնիդայ», որ կարգել են Նիկիայի ժողովի մասնակիցները²: Այս վկայաբանության մեջ Ելիկոնիդա անունը ստուգաբանվում է հետևյալ կերպ՝ «**Բարոք** է անունդ քո Ելիկոնիդա³»: Քրիստոսի վկա Ելիկոնիդան համոզված է, որ ինքը չի մնա տանջանքների եղուկի մեջ, այլ «**Վոխեսն ի մահունէ ի կեանս**»:

Բարոք բառը հնարավոր է, որ առնչություն ունի շումերական amar-baruu «մատաղ եղնիկ» իմաստի հետ, որը հիշատակում է Հ. Աճառյանը ԲԱՐՈՒ անստույգ բառը քննելիս, միաժամանակ առնչելով աֆղաներեն brak, լիթ.varnas «ագռավ» իմաստներին⁴:

«Մատաղ եղնիկ» իմաստը շատ համահունչ է մեր քննության մյուս արդյունքներին, և, հատկապես, երբ գլխատումից հետո նա հայտնվում է Մարիամի, Եղիսաբեթի և այլ սրբուհիների շարքում, որոնց հոգին հանգչում է «**անծերանալի կյանքում**»: Մեր կարծիքով, սա էլ է աստղագիտա-

¹ МНМ, т. 1, էջ 116:

² Le sinaxaire Arme'nien de Ter Israel, publie' et traduit par le dr. G. Bayan, Paris, 1930, p. 507-509:

³ Վարքի ֆրանսերեն թարգմանության մեջ Helikonis, որն ըստ հայ խմբագրի, c'est un surnom des Muses.-Մեկնաբանությունը la legend gresque cite Zeus:

⁴ Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. Ա, էջ 428:

կան պատկերացումների դրսևորում՝ հատկապես կապված Ծիր կաթնի հետ. «Եւ նոյն ժամ **հատին զգլուխն** մայիսի ԻԹ, եւ **փոխանակ արեանն՝ կաթն հեղավ**»:

Եղիական հնգօրյա պահքը կրում է այդ անվանումը, քանի որ նախորդում է **Եղիա** մարգարեի տոնին, սակայն այն, ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի, առնչություն չունի Եղիա մարգարեի հետ, այն պարզապես տարվա ընթացքում 4 եղանակների (գարուն, ամառ, աշուն, ձմեռ) համար կատարվող պասերից մեկն է, առանց տոնական հանդիսությունների: Այն ամառնամուտին նվիրված պահք է, ինչպես կոչվել է նախկինում¹: Քանի որ այն անմիջապես հաջորդում է Հոգեգալստի տոնին², ապա Հարության տոնի 35-օրյա շարժականության պատճառով այն ևս շարժական բնույթ ունի, ինչպես և **Եղիա մարգարեի տոնը**: Պահքը հանդիպում է ամենաշուտը մայիսի 11-15-ին, և ամենուշը՝ հունիսի 14 -18-ին, իսկ Եղիայի տոնը համապատասխանաբար՝ մայիսի 16-ին և հունիսի 19-ին: Եղիական պահքն ու Եղիա մարգարեի տոնը միջին հաշվով համընկնում է «**ԵՐԿՎՈՐՅԱԿ**» կենդանակերպին, ինչպես և ամառ եղանակին ու ամառային արևադարձի օրվան կամ մոտական օրերին:

Դարձյալ կարևորենք ժամանակը՝ Եղիա-ամառնամուտից մինչև ամառային արևադարձ, ապա ամառվա վերջ: Եղիան ոչ միայն կապված է գետի հետ, ապրում է հեղեղատում, այլև նրան կերակրում են ագռավները (Գ. Թագ., 17: 5-7) (հմմտ. Ելիկոնիդայի Բարոք անվան մեկնության հետ): Նա կրակով այրում է Օքոզիա թագավորի ուղարկած հարյուր զինվորներին (Դ. Թագ., 1: 9-12, 17 : 14-16, Գ. Թագ., 18):

Որքան էլ Մ. արք. Օրմանյանը պահքը կապում է ամռան հետ, և ասես պատահական է համարում Եղիական անվանումը, սակայն հենց Եղիայի ատրիբուտները խոսում են Եղիայի՝ ամռան հետ ունեցած ընդհանրության մասին: Նա սպառնում է **երաշտով ու սովով**, որոնք ուղղակիորեն ամռանը բնորոշ երևույթներ են, կամ անպակաս է դարձնում սափորների այլուրն ու կուժերի յուղը, աղոթքով անձրև է բերում (Գ. Թագ., 17: 1, 17 : 14-16, Գ. Թագ., 18), որը վկայում է, որ Եղիան ունի որոտաբեր

¹ **Մ. արք Օրմանյան**, Ծիսական բառարան, Եր., 1992, էջ 17, էջ 34:

² Հոգեգալուստի ժամանակ **Սբ. Հոգին** կրակե լեզվակների տեսքով իջնում է առաքյալների վրա: Տոմարական տեսանկյունից թե՛ ամառ է հիշեցնում, երբ էլ կարող է երաշտ լինել, որին էլ կհետևի սովը:

աստվածության բնորոշ գծեր (**որոտաբերը** նստում է սարի կատարին, **վիշապին** սպանելուց հետո է միայն անձրև տեղում): Կարելի է նշել, որ Եղիան և՛ կարող է երաշտ ու սով առաջացնել, և՛ անձրևներ բերել:

Եղիան ոչ միայն հրաշագործ է, այլև **մնացել է անմահ, կենդանի երկինք բարձրացել** (Թագ., Դ - 2:11): Նա **գետի** մոտից է երկինք բարձրացել և ներքևում է թողել իր մորթե վերարկուն: Մորթե վերարկուն արդյոք այժենակա՞ճը չէ՞: Որևէ կենդանու **մորթի կրելը** հեքիաթների մեջ խորհրդանշում է մարդու՝ մահվան աշխարհում գտնվելը, իսկ աստղերի դեպքում՝ նրանց անկումը, երկնքում չերևալու ժամանակը: **Պտտահողմն** է Եղիային հրե կառքով երկինք բարձրացնում, ինչը վկայում է, որ Եղիային երկինք է բարձրացնում **վիշապը**: Եղիան ուղղակի վարում է հրե կառքը, այսինքն, այլաբանորեն ասած, նա **կառավարն** է: Իսկ ի՞նչ կառք է վարում Եղիան: Կառք բառի հոմանիշ կարելի է համարել սայլը, որը «**ՄԵԾ ԱՐՋ**» կամ «**ՇԵՐԵՓ**» համաստեղության անվանումներից մեկն է: Իսկ «**ՄԵԾ ԱՐՋԻ**» կամ «**ՇԵՐԵՓԻ**» հետ է ուղղակիորեն կապված «**ԿԱՌԱՎԱՐ**» համաստեղության α աստղը՝ **Կապելլան՝ Այծիկ-«եղնիկը»**, որին կարելի է **ուլ** անվանել, ինչպես որ հայկական աստղագիտական գրականության մեջ անվանում են Կապելլան՝ **Ուլ¹, այն է՝ այծի ձագ, այծիկ**: Մենք դեռևս կանդրադառնանք «**ՄԵԾ ԱՐՋ**» ու «**ԿԱՌԱՎԱՐ**» համաստեղության α աստղի՝ Կապելլայի՝ այծիկի խնդրին²:

Եղիայի մորթե վերարկուն բաժին է հասնում Եղիսեին: Երիքովի մարգարեների որդիները տեսնելով նրան՝ ասում են. «Եղիայի հոգին իջել է Եղիսեի վրա» (Թագ., Դ-2:15): Կարելի է ասել, որ սա հոգի ու մարմին բաժանման արտահայտություն է՝ հոգին՝ Եղիան գտնվում էր անդրաշխարհում և բարձրանում է հետո վերին աշխարհ՝ երկինք: Եղիսեն հենց անդրաշխարհում է (Եղիսեյան դաշտերը հենց անդրաշխարհ են նշանակում): Փաստորեն Եղիան ու Եղիսեն հոգու կրողներն են, իսկ հոգին **մորթե մուշտակն** է:

Եղիայի, իբրև աստղի, հիմնավորումը ասես տրված է նրա մասին պատմող հայկական ավանդապատումներում: Երկրի վրա նա կուրանում է (առասպելաբանորեն՝ աստղի անկում), որից հետո երկինքը բացվում է, ու նա կառքով երկինք է բարձրանում (համբարձում): Հայկական ավան-

¹ Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմությունից, Եր. 1985, էջ 213:

² Տե՛ս համապատասխան էջի նկարը:

դապատումում շատ կարևոր կերպար է ի հայտ գալիս՝ գայթակղիչը, **սատանայի** կերպարով¹: «Սա (Եղիան –Գ.Ս.) մի շատ առաքինի մաշակար է եղել, որ չկամենալով կանանց երեսը տեսնել մեծ ու ծանր գդակ է ծածկել, որպեսզի չկարողանա վերև նայել: Մի անգամ սատանան կնոջ կերպարանքով եկել է մաշիկ կարել տալու: Նա ցույց է տվել իր փոքրիկ, գեղեցիկ ոտը, մի քիչ սիրախոսել: Եղիան բարձրացրել է գլուխը և երեսին նայել: Բայց իսկույն զգացել է, որ մեղանչեց, ձեռի հերոնը իր աչքն է խրել, կուրացրել: Նույն վայրկյանին սատանան անհետացել է, իսկ Եղիան երկինք է բարձրացել»² (795 ա):

Հայկական երկրորդ ավանդապատումի բովանդակությունը համարյա նույնն է³ դարձյալ Եղիա մարգարեն գայթակղվում է **սատանայից**, ապա հերոնով կուրացնում է իրեն, ապա բացվում է երկինքը, այնտեղից դուրս է գալիս հրեղեն կառքը, որով ինքը համբառնում է երկինք (795 բ): Եվ Աստվածաշնչում, և հայկական ավանդապատումներում հասկանալի է, որ խոսքը երկնային երևույթի մասին է: Եվ Եղիան միակ մարգարեն է, որ ողջ-ողջ երկինք է համբառնել: Այս երկու ավանդապատումների մեջ ուշադրության են արժանի երկու առարկա, որ կապվում են Եղիա մարգարեի հետ՝ գդակը և հերոնը (հերին), որոնք այլաբանություններ են, **գդակը** երկնքի, իսկ հերոնը՝ որպես կաշին ծակող գործիք, կայծակի խորհրդանիշներից է: Մյուս ավանդագրույցի համաձայն՝ անհավատները ծեծում են նրան, նա լաց է լինում, արցունքները դառնում են ջալահիր (796)³:

Ջալահիր թանկարժեք քրի հոմանիշներից են, ադամանդը, ավաստը, հուլը⁴, որոնցից վերջին երկու անունները հիշեցնում են առաջինը՝ «ԿԱՌԱՎԱՐԻ» աստղերից մեկի արաբերեն անունը՝ ավագ, մյուսը՝ նույն համաստեղության Կապելլա աստղի հայկական անունը՝ Ուլ:

Եղիա մարգարեի ուղղակի ժառանգորդն է **Եղիսե** մարգարեն՝ նրա

¹ Սատանան ամենատարբեր կերպարներով կարող է հայտնվել՝ մարդու, այծի, այլ կենդանիների ևն:

² **Ա. Ղանալանյան**, Ավանդապատում, Ե., 1969, էջ 347:

³ Նույն տեղում, էջ 348:

⁴ **Ա. Սուքիասյան**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 2009, էջ, էջ 5, 10, 209, 670:

աշակերտը: **Անապատում**¹ (դարձյալ ամռան ու երաշտի խորհուրդ ունի իր մեջ) Եղիան լսում է Աստծու ծայնը. ասում էր, թե իր փոխարեն մարգարե պետք է օձի **Եղիսեին, ով այդ ժամանակ եզներով վար էր** անում: Եղիսեն սկսում է ծառայել Եղիային և տեսնում է Եղիայի համբառնալը երկինք հրեղեն կառքով (Թագ. Դ - 2 : 11), որից հետո նա կարողանում է իրականացնել Եղիայի կատարած հրաշքների նման հրաշքներ: Նրան ծաղրող **մանուկները**² («Բարձրացի՛ր, ճաղատ, բարձրացի՛ր, ճաղա՛տ»³) (Թագ. Դ- 2:23)), նրա անեծքով հոշոտվում են երկու **էգ արջերի** («ՄԵԾ ԱՐՋ» ու «ՓՈՔՐ ԱՐՋ» համաստեղություններ) կողմից: Համաձայն հայկական ավանդազրույցների՝ 7 սանամայրերն են դարձել աստղեր ու կազմել «ՄԵԾ ԱՐՋ» համաստեղությունը՝ իրենց քավորին կերակրել մոռանալու (սովի մատնելու) պատճառով:

Եղիսեն ուղղակի «**ԵԶՆԱՐԱԾ**» համաստեղությունն է, որ կոչվում է նաև «**ԱՐՋԱՊԱՆ**»⁴ իր գլխավոր **Աստղի Արկտուրի անունով**, սերտորեն առնչվում է «ՄԵԾ ԱՐՋ» համաստեղության ու Եղիա-կառավարի միջոցով էլ՝ **Կապելլայի** հետ:

Գուշակություն անելու համար Եղիսեն հրավիրում է մի **քնարահար**⁵ (гусляр=սազահար⁶), սովի ժամանակ կերակրում է հարյուրավոր մարդկանց ևն: Շատացնում է որբեայրու յուղը:

Քրիստոնեական երկու մարգարեները՝ Եղիան ու Եղիսեն, ուղղակիորեն կապված են համաստեղությունների հետ՝ «**ԿԱՌԱՎԱՐ**» «**ՄԵԾ ԱՐՋ**» «**ԱՐՋԱՊԱՆ**», ունեն որոտաբեր աստվածության գործառույթ, իսկ հայկական ավանդույթը նրան առնչում է **սատանայի հետ**, որի

¹ Եբրայական հավատալիքների համաձայն՝ անապատում բնակվում է չար ոգի **Ազազել** անունով, որը նշանակել է «ազատ արձակված նոխագ»: Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 81:

² «ԿԱՌԱՎԱՐ»ի աստղերից մեկը կոչվում է արաբերեն Մանկալի, որ այժիկ է նշանակում, ասես հայերեն մանուկ – երեխա բառն է: Հատկապես դրա օգտին է խոսում, որ վաղ տարիքում խելոք երեխաներին գառնուկ, չարերին այժիկ են անվանում:

³ Հմմտ. Քաչալ Արամազդի հետ:

⁴ Աստղատունը կոչվում է նաև Տորենքաղ մշակ Մխիթար Սեբաստացու կազմած աստղային քարտեզի վրա: Տե՛ս **Գ. Բրուտյան**, Օրացոյց հայոց, Էջմիածին, 1997, էջ 276:

⁵ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ «ՔՆԱՐ»ահար (Թագաւորութիւններ Դ, 3-15), իսկ ռուսերեն թարգմանության մեջ гусляр, որ ավելի մոտ է սազահարին: Իսկ քնարահարը Դավիթ թագավորն է:

⁶ Ուղղակի՝ «ԱՐՋԱՊԱՆ» ու «ՔՆԱՐ» համաստեղությունների մասին է խոսքը:

հայտնվելու ժամանակ Եղիայի աստղը խավարում է (սեփական աչքն է հանում Եղիան):

Ներկայացնենք **«ՄԵԾ ԱՐՋ»** համաստեղությունը: Համաստեղության գծապատկերը Արկտիկայում բնակվող բևեռային սպիտակ արջ է հիշեցնում: Առավել հայտնի են այդ համաստեղության յոթ պայծառ աստղերը, որոնք իրենց դասավորությամբ շերեփ են հիշեցնում: Հայերն այն կոչել են Պտտան, Սայլ, ուրիշ ժողովուրդներ՝ այլ կերպ (յոթ **Եզներ, նժույգ, պատգարակ, նավակ, վարագ, գետածի** և այլն¹): Աստղագիտության մեջ այն մտել է նաև **«ՇԵՐԵՓ»** անունով:

Հին հունական լեգենդի համաձայն՝ Ջևսի սիրեցյալ Կալիստոյին է արջ դարձրել խանդոտ Հերան, իսկ նրա որդուն՝ Արկասին դրդում է որսի ժամանակ սպանել սեփական մորը: Ջևսը նրանց փրկելու համար երկուսին էլ երկինք բարձրացնելով՝ փոխակերպում է համաստեղության: Կալիստոն դառնում է **«ՄԵԾ ԱՐՋ»**, իսկ Արկասը՝ **«ԵՋՆԱՐԱԾ»** կամ **«ԱՐՋԱՊԱՆ»** համաստեղություն, որի պայծառագույն աստղը կրում է Արկտուր (հունարեն «արկտուրոս», այսինքն «արջի պահապան») անունը:

«ՄԵԾ ԱՐՋ» համաստեղությունը Ամերիկայի նախկին բնակիչները անվանում էին Շերեփ, չինացիները՝ Պե-Տու, որ նշանակում էր ցորենաչափ (**կոտ-Գ. Ս.**), կիրգիզներն անվանել են Կապած ձի, ոմանք էլ (այդ թվում և հայերը)՝ Սայլ, Եզներ և այլն²:

Հայոց մեջ **«ՄԵԾ ԱՐՋ»** համաստեղության **«ՇԵՐԵՓ»** անվանումը երբևից է մուտք գործել այնքան էլ պարզ չէ, սակայն, մեր կարծիքով, այն ավելի վաղ ժամանակներից է կապված եղել շերեփի հետ, քան ծանոթությունը Ամերիկայի նախկին բնակիչների հետ:

Այսպես, Հայաստանի տարածքում պեղումների ժամանակ հայտնաբերվել են շերեփներ Ջարխեսի (մ.թ.ա. II հազ. վերջ), Արթիկի (մ.թ.ա. XII-XI դդ.), Լճաշենի (մ.թ.ա VIII դար) պեղումներից, երկար պոչով շերեփներ հայտնաբերվել են Իրաքի (մ.թ.ա. III հազ.) և Սիրիայի (մ.թ.ա II-I հազ.) դամբարաններում, որոնք անզարդ, կենցաղային առարկաներ են³: Ջարխեսի, Լճաշենի, Արթիկի պեղումներից հայտնաբերված շերեփների կա-

¹ **Ս. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 23:

² **Բ. Թումանյան**, Հայ աստղագիտության պատմությունից, էջ 210:

³ Անդ, առավել մանրամասն տե՛ս **Cl. F. A. Shaeffer**. Stratigraphiecomparce et chronologie de l'AsieOccidentale, London, 1948, p. 83-1, 90-15.

պը աստեղնալից երկնքի ու արևի պաշտամունքի հետ նկատել է Ս. Ա. Եսայանը¹:

Ասենք՝ Հայաստանի տարածքում լավագույն պահպանված շերեփը կարելի է համարել Լոռի բերդի քրմական դասի դամբարաններից մեկում հայտնաբերվածը: Յեղային ավագանու և քրմական դասի բազմաթիվ դամբարանները հարուստ տեղեկություններ են հաղորդում Հայաստանի՝ մ.թ.ա II-I հազարամյակների նյութական ու հոգևոր մշակույթի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերաբերյալ: Առանձնահատուկ է դրանցից մեկը՝ շրջանաձև կրոնիկը, որի կենտրոնական մասի կճուճների միջև զետեղված է եղել **բրոնզե եռոտանի սկուտեղը**: Հյուսիս-արևելյան կողմում բերանքսիվայր դրված երեք կճուճների վրա խաչաձև դիրքով հանգչում էին **երկճանին** և երկար կոթով **երկճանկ կեռը**: Այս կճուճներից մեկի մեջ, որ զարդարված էր **եղևնաձև** (կենաց ծառի խորհուրդն է - Գ. Ս.) փորագրություններով, թաքցրած էր **բրոնզե գավաթը («ՀԻԴՐԱՅԻ»** մեջքին ամրացված **«ԹԱՍ»** կամ **«ԸՄՊԱՆԱԿ» - Գ. Ս.**), իսկ արևմտյան պատի մոտ շարված կճուճներից մեկի տակ՝ **բրոնզե մարդակերպ բռնակով շերեփը** (նկ. 1):



Նկ. 1

Շերեփի նկարագրությունը տանք՝ ուղղակիորեն մեջբերելով հոդվածագրին. «Պատրաստված է 31 սմ երկարություն ունեցող բրոնզե թիթեղից: Այն մի փոքր ձվաձև է, 22 սմ տրամագծով, կլոր հատակով, 10 սմ բարձրությամբ: Շերեփի շուրթին, երկու գամերով ամրացված թիթեղիկի միջոցով կանգնեցված է դեպի շերեփի ներսը նայող այծի մի արձանիկ, որ ընդամենը 3 սմ երկարություն ունի, կանգնած է չորս ոտքերի վրա.: Շերեփի հակադիր կողմում բռնակն է՝ ուղղահայաց կանգնած զին-

¹ Անդ, առավել մանրամասն տե՛ս **Cl. F. A. Shaeffer**. Stratigraphiecomparce et chronologie de l'AsieOccidentale, London, 1948, p. 112:

վորի արձանիկի տեսքով: Չինվորը (բարձրությունը 14.5 սմ) սաղավարտով է, մերկ է, ատլետիկ կազմվածքով, վիզը, կուրծքը, թիկունքն ու բազուկները ցայտուն են արտահայտված, կրծքի ու թիկունքի տասներկուական եռանկյունաձև բացվածքները կարծես ընդգծում են նրա զորեղ մկանները (գուցե զրահը), ձեռքերն արմունկներից առաջ են պարզված, կարծես ինչ-որ զենք, թերևս նիզակ բռնելու կեցվածքով:..... Անմիջապես աչքերից վեր սկսվում է սաղավարտը, որը գագաթին նստող թասականման գդակի ձև ունի և երկու կողմից զարդարված է երեքական եռանկյունաձև կտրվածքներով: Թասակի կենտրոնից՝ ճակատամասից դեպի ծոծրակը բարձրանում է վերին ծայրում տափակող ուղղահայաց կատարը, որը ետնամասում թասակից անջատվելով սրանում է՝ իջնելով մինչև նրա եզրը: Չինվորի նեղ գոտկամասից ցած արտահայտված է նրա արական հատկանիշը, իսկ համեմատաբար լայն ազդրերին փորագրված են խոշոր ճանկախաչեր (սվաստիկաներ): Վերևում հարթ, ծողանման կարճ (6 սմ երկարության) կոթը շերտիկի շուրթին է ամրացվել չորս բևեռներով գամված թիթեղիկի միջոցով»¹: Ասենք, որ 20-րդ դարի գիտնականի կողմից զինվոր կոչվածի նկարագիրը ուղղակիորեն կրկնում է Գրիգոր Նարեկացու «Տաղ Յարութեան» մեջ նկարագրված ճորտին, որ սայլն է վարում. «Այն ճորտն ճոճ էր և ճապուկ, ուռամիջակ, հաստաբազուկ, լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղագոչ. Նա ձայն ածեր **եզն ամուլին**, կանչին առնէր **աթոռակին**: Եթէ եզինքն են **սաթ ու սպիտակ, ծաղկախայտուցք, արագաքայլ, ընթացականք**....»²: Պարզապես մեր աչքի առջև արձանանում են բիբլիական Եղիան ու Եղիսեն: Տաղն ամբողջության մեջ աստեղնայից երկնքի քրիստոնեական խորհրդաբանության արտահայտություն է, որտեղ սայլիկը խորհրդաբանում է «**ՄԵԾ ԱՐՋ**» ու նաև «**ՓՈՔՐ ԱՐՋ**» համաստեղությունները, ճորտը՝ «**ԱՐՋԱՊԱՆ**», **սաթ ու սպիտակ** եզներով, և այսպես շարունակ: Միայն մի մակդիրի մասին խոսենք, համոզվելու համար, որ այն վերաբերում է՝ «**ԱՐՋԱՊԱՆ**» կամ՝ «**ԵՋՆԱՐԱԾ**» համաստեղությանը: Գրիգոր Նարեկացին բնորոշում է **եզներին արագաքայլ, ընթացականք**: 20-րդ դարի աստղագետը այդ համաստեղության գլխավոր՝ **Արկտուր աստղը բնութագրում է այսպես. «Արկտուրը ի տարբերություն մյուս աստղերի,**

¹ Ս. Դևեջյան, Լոռի բերդի քրմի դամբարանը, էջ 110-111:

² Գր. Նարեկացի, Տաղ Յարութեան, Հայ դասական քնարերգություն, հ. 1, Եր., 1986, էջ 161-162:


երկնքում շատ արագ է փոխում իր դիրքը, այլ կերպ ասած՝ դրա սեփական շարժումը մեծ է»¹: Մենք չենք վերլուծի այս տեսանկյունից ողջ տաղը, սակայն բերվածն էլ բավական է հասկանալու, որ անքակտելի կապ կա պեղածո շերտի, Գրիգոր Նարեկացու Քրիստոսի Հարության տաղի և 20-րդ դարի գիտնականի նկարագրության միջև: Այս տաղում սայլի, ճորտ-սայլորդի նկարագիրը, համոզված ենք, որ երկնային «ՍԱՅԼ», այն է՝ «ՄԵԾ ԱՐՁ» կամ «ՇԵՐԵՓ» և «ԱՐՋԱՊԱՆ» կամ «ԵԶՆԱՐԱԾ» համաստեղությունների պատկերումն է նաև: Իսկ տաղում որտե՞ղ է այծիկը: Ասենք որ ամենագաղտնագրվածն է այն, այստեղ առանց մանրամասների մեջ խորանալու ասենք, որ այն թաքնված է գեղեցիկ **մանուկների**, որոնց ձեռքում են տերունական **խաչն ու քնարը** (հմմտ. Եղիսեի հրավիրած քնարահարի հետ) և դրանցից հատկապես, խարտիշագեղ մանկան՝ **Հովհաննես Մկրտչի** խորհրդաբանության մեջ: Մյուս կողմից էլ՝ պատահակա՞ն է արդյոք, որ Հովհաննես Մկրտչի մոր անվան մեջ՝ **Եղիսաբեթ**, առկա է երկու արմատ ԵՂ ու ՍԱԲ, որոնցից մեկը մեզ հետաքրքրող **ԵՂ** արմատն է, երկրորդն իմ ընկալումով՝ Կապելլայի **Կապ-Սաբ** արմատն է՝ երկուսն էլ **այծիկ-ուլ** կամ եղնիկ նշանակությամբ՝ ուլ-ուլ:

Պարզ իրողություն է, որ համաստեղությունների բոլոր աստղերը գտնվում են մեզանից տարբեր հեռավորությունների վրա, սակայն երկնքում մենք դրանք տեսնում ենք պրոյեկցիայում: Եվ աստղերի պրոյեկցիայի հետևանքով է, որ պեղածո շերտին ունի տվյալ տեսքը, այսինքն դրա պոչին կպած է հաղթանդամ տղամարդու քանդակը (Եղիսե), որն իր վրա կրում է սվաստիկաներ², ինչը ամենակարևոր ցուցիչն է, որ համաստեղության կամ աստղի խորհրդանիշ է, իսկ շերտի շուրթին նստած է Կապելլան՝ **Այծիկը** կամ **Ուլը**: Համոզված կերպով կարելի է պնդել, որ այն աստղադիտակ է, որի միջոցով կարելի է որոշել վերոհիշյալ համաստեղությունների ու Կապելլայի տեղը երկնքում տարվա բոլոր եղանակներին: «ՇԵՐԵՓի» պոչը գարնանն ուղղված է լինում դեպի արևելք, ամռանը՝ հարավ, իսկ ձմռանը՝ հյուսիս³:

¹ Ս. Ներսիսյան, նշվ., աշխ., էջ 39:

² Կեռ խաչերը կամ սվաստիկաները խիստ նման են «ՇԵՐԿՈՒԼԵՍ» համաստեղության սիմվոլին:

³ Ս. Ներսիսյան, նշվ., աշխ., էջ 25:



Աստղագիտության մեջ ընդունված է ասել, որ «ՄԵԾ ԱՐՋԸ» ցույց է տալիս Կապելլան: Կապելլան գտնելու համար շերեփի բերանը ձևավորող Մեգրեց և Դուբխե աստղերը մի գծով շարունակել դեպի աջ: Շարունակության վրա հանդիպող առաջին աստղը Կապելլան է, որ միակ աստղն է, որ ունի իր առանձին խորհրդանիշը՝ ✂, ինչպիսիք ունեն Արևը, Լուսինը, մոլորակները: Առանձին խորհրդանիշ ունենալը մի անգամ էլ է ընդգծում, որ Կապելլան երկնքի կարևորագույն աստղ-արևներից մեկն է:

Քննության ոլորտ ներառենք նաև՝ **ԵՂԻ** բառը, որ նշանակում է «հասնելու մոտ՝ կաթնահամ ցորեն», որից եղի խանձեալ՝ «աղանձ»¹: Ուղղակի ցուցիչ ժամանակի, երբ ցորենը կաթնահամ է, և այն հաճախ կրակի վրա խանձում են, որ կոչվում է եղի անել: Բնականորեն երաշտի ժամանակ կարող է դեռ չհասունացած ցորենը եղի դառնալ՝ այրվել, խանձվել: Իսկ ամառնամուտն ու ամառային արևադարձը ուղղակիորեն աշնանացան ցորենի հասունանալու, ապա բերքահավաքի շրջանն է², և այսինքն եղին ևս կապված է «ԵՐԿՎՈՐՅԱԿ» կենդանակերպի հետ: Այստեղ ԵՂ արմատն ունի այրելու, խանձելու իմաստ, որը հիմնավորվում է նաև մեկ այլ բառով՝ ԵՂԵԱՄՆ, որից եղեամնախար, որ նշանակում է կրակից այրված, սևացած, մյուս դեպքում՝ ցրտից այրված, սևացած³: Եղեամն ստուգաբանում են «արև»՝ հելիոս բառով: Հունարեն հելիոսին են առնչվում նաև վերոնշյալ **ԵՂ** արմատ ունեցող բառերը՝ որպես արևային:

ԵՂ արմատը, որը Եղն, Եղնիկ, Եղջերու բառերի արմատն է նաև, թույլ է տալիս ստուգաբանել այդ բառերը ևս: Քանի որ եղջերուն ինքնին

¹ Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 2, էջ 19:

² Առավել մանրամասն տե՛ս, Գ. Բրուտեան, նշվ. աշխ., էջ 276-278:

³ Նույն տեղում, էջ 16:

պաշտամունքային կենդանի է եղել ժամանակի հսկայական ծիրի մեջ՝ անհիշելի ժամանակներից սկսած, որի ապացույցները սփռված են ոչ միայն Հայկական լեռնաշխարհում¹, այլև հնդեվրոպական ժողովուրդների տարածման բոլոր արեալներում, ինչպես և դրանից դուրս, ապա սխալված չենք լինի, եթե քիչ մանրամասն անդրադառնանք նախ այդ արմատի էթնոսենսանտիկայի լեզվակոնցեպտոլոգիական ասպեկտներին, ինչը լավագույնս ներկայացրել է Պյոտր Չերվինսկին²: Նա նախ ընդունում է Գամկրելիձե-Իվանովի ստուգաբանությունը, այն է՝ **ОЛЕНЬ (ԵՂՋԵՐՈՒ), ЛОСЬ (ՈՐՄՁԴԵՂՆ), АНТИЛОПА (ԱՅԾՔԱՂ, ԱՅԾԵՂՋՈՒՐ)**³ խմբի համար վերականգնվում է համահնդեվրոպական ***el-**, ***ol-** արմատը, որը տարբեր ածանցումների է ենթարկվում (այս ենթադրյալ հնախոսական արմատը առանձնանում է գունային նշանակությամբ «շիկակարմիր» «**бурый**»): Հնդեվր. **(e)l-k[h]**, հին հնդկ. **Ṛśya, řsa** («այծքաղ»), լատ. **alcē** «որմզդեղն», հին վ. գերմ. **ēlho** «որմզդեղն», գերմ. **Elch**, հին անգլ. **eolh**, հին իսլ. **elgr**՝ բոլորն էլ «որմզդեղն» նշանակությամբ: Հնդեվր. **el-en**, հուն. **έλλόζ «եղնիկի ձագ»**: Հայ. **եղ > ել** (լ-ը լծորդությամբ): Հետո դեռևս շատ վաղ շրջանում այս բառը տաբուացվում է՝ փոխարինվելով նոր բառով: Այսպես ***gav-az-(na)**⁴ բառացիորեն՝ «կով-այծ», ավետայում՝ **gavasna «եղնիկ»**: Հետագայում այս անվանումն էլ է արգելվում՝ փոխարինվելով էվֆեմիստական՝ հատկանշային նշանակությամբ, այն է՝ «եղնիկի»՝ իբրև եղջյուրներ ունեցողի (օր., հայերենում արդեն դառնում է եղջերու՝ այսինքն եղջյուր ունեցող): Եղն – արմատը բնիկ հնդեվրոպական, գունացույց արմատից⁵ ընդունում է նաև Գ. Ջահուկյանը:

Այծքաղ-այծեղջյուր անունը վերաբերում է տարբեր տեսք ու չափեր

¹ **Ա. Մնացականյան**, Դիցաբանական եղջերուն միջնադարյան հայ արվեստում, Բանբեր Մատենադարանի, թիվ 12, Եր., 1977, **Ա. Դևեջյան**, Լոռի բերդի քրմի դամբարանը, ՊԲՀ, 1986, թիվ 3, էջ 108-124, **Ա. Դևեջյան**, **Ա. Հոբոսյան**, *Տիեզերական պարկերային արտադրումը Լոռի Բերդի հնագիտական իրերի վրա*. Պատմա-բանասիրական հանդես, № 3, Եր., 2015, էջ. 168-180:

² **Ս. Червинский**, Фольклор и этимология, Лингвоконцептологические аспекты этносемантики, Тернополь, "Крок, 2010.

³ **Т. Гамкредидзе, Вяч. Иванов**, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, с. 517:

⁴ Այսպես է անվանվում նաև սաամի և գրենլանդական էսկիմոսների մոտ:

⁵ **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 215:

(նապաստակից մինչև կով) ունեցող բոլոր ենթաընտանիքներին, որոնցից ոմանք ծագումնաբանորեն մոտ են ցուլին, մյուսները՝ այծերին կամ ոչխարներին: Տարբեր է միայն հնդկական այծքաղը՝ **գառնան**, առանձնահատուկ տեսակ է, սակայն անվանումը հիշեցնում է հայերենով ոչխարի ձագ՝ գառ[ն]:

Անունը գոյի ներքին էություն, այնպիսի առանձնահատկություն, գոյաբանական նշան է, որին արդեն տիրապետում է անունը:¹ Որոշ կենդանիների անունների ստուգաբանությամբ Պ. Չերբինսկին շատ հետաքրքիր եզրահանգումներ է անում, այն է՝ այծքաղը (եղնիկ ևն-Գ.Ս.) ո՛չ ցուլ է, ո՛չ, ..., ո՛չ այծ, ո՛չ ոչխար, մինչև ժամանակ այդ բոլորն է:² Նա դիտարկելով ընտանի կենդանիների անունները՝ միմյանց հետ ունեցած հարաբերության մեջ՝ ընդհանրություն է տեսնում кот, коза, корова, конь, кобель, кобыла, кокош (курица), котка (բրբռ. ոչխար), кутенок (տարբեր կենդանիների ձագերին տրվող անուն՝ ուլ, հորթ, գառ, մտրուկ, ճուտ ևն³) անունների միջև:⁴ Անունները ձևափոխվելու հատկություն ունեն, սակայն հնչյունական կառույցի ընդհանրությունը վկայում է դրանց էական հատկանիշի ընդհանրության մասին, և տվյալ դեպքում՝ հանգեցնում է դրանց հղանալու և ծնելու, ցնկնելու, ինչ-որ փոքրի կամ ձագի գաղափարին, իսկ դրա հիմքում ընկած է առասպելական, արխայիկ գաղափար: Այս շարքից բոլոր եղջյուրավորները միանշանակ, ինչպես և կատուն (**եղուրոս**⁵) առնչվում է որոտաբեր աստվածությանը և վերածվում է համաշխարհային օձի: Կատվի՝ Որոտաբերի հետ կապը իրեն առնչում է այծին: Իբրև առասպելական կենդանի հնդեվրոպական ավանդույթում այծն է լծված որոտաբեր աստվածության կառքին: Կատվի և այծի անունների կապը շատ արխայիկ է: Թեև արխայիկ, սակայն կատվի **եղուրոս** (կուզ – Գ.Ս.) անունը և այծի եղջերվազգի լինելու ուղղակի ընդհանրության վկայություն է:

¹ **Պ. Чербинский**, Фолклор и этимология, лингвоконцептологические аспекты этносемантики, Тернополь, Крок, 2010, с. 92.

² **Պ. Чербинский**, նշվ. աշխ.:

³ Հայերենում այդպիսի շարք կարող են կազմել, օրինակ, հովը (ոչխարի հայերենում չպահպանված հնդեվր. արմատը), հավը (թռչուն), հովատակը (ծի), հվուրը (2-3 տարեկան՝ արու այծ):

⁴ Трансформационная природа имени; коза, который конь, корова., Պ. Чербинский, նշվ. աշխ., էջ 83:

⁵ **Հր. Աճառյան**, ՀԱԲ, հ. 2, էջ 23:

Եղջերուն հյուսիսային ժողովուրդների մոտ համընկնում է **ՊՕՇԵ**-ին՝ **ՈՐՄՁԴԵՂՆԻ**: Որմզդեղնի հոմանիշներն են՝ իշայծյամ, ճղնեղնիկը, իսկ դիցաբանության մեջ խորհրդանշում է Արամազդին, Ջևահին, Դիոսին¹:

Որմզդական հուր բառին զուգահեռ դրված է Վռամական հուր հազվադեպ հանդիպող զուգահեռ², ըստ որի Վռամ անունը համարժեք է Որմզդին:

«Էդդայի» տեքստերի համաձայն ԵՂՆը-ը կոչվում է **HJORTR**³, հին գերմ և հին անգլ. **Heorot**, հին վ. գերմ. **hiruz** «**եղնիկ**», որոնք ձևավորվել են «**եղջուր**» նշանակող հիմքից՝ իբրև եղջրավոր կենդանի: Այս շարքի լեզվական քննությունն ավարտենք, ընդհանուր ներկայացնելով **ԵՂՆ-ԵՂՆԻԿ-ԵՂՋԵՐՈՒ** բառերի հոմանիշներից մի քանիսը՝.

1. Կխտար, վիթ, եղնար, մարալ⁴ (**վայրի ոչխար**), ջեյրան, եղվփին⁵, գազել, համույր, այծյամ⁶, այծեմնիկ, այծեղջերու, ջեյրան, պախրա, պախրակով, քոշավայրի, ժեռայծ, այծքաղ⁷ և 2. Լուսաստղ:

Ինչպես նկատում ենք =ԵՂ= արմատին զուգահեռ, որոշ հոմանիշներում ի հայտ է գալիս =ԱՅԾ= արմատը կամ ոչխար նշանակությունը: Դեռևս հինգերորդ դարում Եղիշեն գրում է. «...եղջերի՝ ջուր, որ է այծ,....»⁸: Այդ իսկ պատճառով կստուգաբանենք նաև ԱՅԾ անունը և կբերենք դրա հոմանիշները ևս, քանի որ մեզ առավել հետաքրքրում է հենց այծիկը՝ **ուլը**, որի արմատը կարող են ենք զուգահեռել հնախոսական *ol, *el արմատներին: Ներկայացնենք նաև նաև **ԱՅԾ** բառի ստու-

¹ Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 522:

² Նույն տեղում:

³ **HJORTR** և **Heorot** անունները խիստ համահունչ են հայոց Հրոտից կամ Հրորտից ամսանվանը, որը, ըստ որոշ ուսումնասիրողների, նույնանում է հունական դիցաբանության Աֆրոդիտեի և հնդկական դիցաբանության Բուդրա անունների հետ և համապատասխանում **ՎԵՆԵՐԱՅԻՆ**:

⁴ Այն համարվել է Ալթայի արեգակ և խորհրդաբանում է համաշխարհային ծառը:

⁵ Այն հազվագյուտ տեղանուններից է, որ պահպանել այս արմատից և մինչև այսօր Եվփին ձևով գոյատևում է: Այս շարքին պետք է դասել նաև Եղվարդ տեղանունը: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Եղջերվաքաղ բառը, որի հոմանիշներն են դիցաբանական Քիմեոան, պայիկը և վարդաքաղը:

⁶ Եղջերուների ընտանիքի երկկճղակավոր կենդանի, որը ծնում է մայիս ամսին և հաճախ երկվորյակներ է ունենում: Այն դառնում է ցինի, անգրի ու բվեճի որս:

⁷ Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967, էջ, 180, 34-35:

⁸ Լ. Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնությունը», Եր., 1992, էջ 262:

գաբանությունը: + **ԱՅԾ** - բնիկ հայերեն բառ, հնախոս. Aig', որ համեմատելի է հունարեն, սանսկրիտ, զենդերեն, պահլավերեն նմանատիպ ձևերի հետ՝ նույն նշանակությամբ, իսկ հիռլ. Ag allaid նշանակում է «եղջերու»: Ըստ Սագրզեանի ՀԱ 1909, 336 ծագել է սումեր. **Ruz** «այծ», Karst, Յուշարծ. 408 սումեր. **uz** «այծ»¹: Հատկապես շումերական **Ruz** և **uz** ձևերը ուղիղ համեմատական են Արուս և Արուսյակ բառերին՝ որպես աստղ, միաժամանակ պարսկական az' այծ նշանակող արմատին (հմմտ. գերմ. hiruz **hi-ruz** և հայ. **Կուզ-k-uz** «կատու»):

Ավելորդ չի լինի ընդգծել, որ այժն իբրև կենդանի պատկանում է եղջերուների ընտանիքին, այսինքն ինչ-որ դեպքերում այժն ու եղջերուն կարող են ընդհանրանալ կամ մեկը մյուսին փոխարինել: Նշանակում է, որ մեր քննության ծիրի մեջ ընդգրկելու ենք ինչպես այծի, մասամբ կատվի, այնպես էլ եղջերվի հետ կապված հավատալիքներն ու պատկերացումները: **ԱՅԾ** կենդանու անունը այնքան տարբերակներ ունի, որ ուղղակի զարմանք է հարուցում: Կենդանական աշխարհում երևի այն կենդանիներից է, որի համար այսքան զանազան անուններ գոյություն ունեն, որոնք կապվում են ոչ միայն այս կենդանու տարիքի, այլև գույնի, ծնած լինել-չլինելու և այլ հանգամանքների հետ: Ահա դրանք՝ ԱՅԾ (էգ), քաղ, քոշ, նոխագ, դուշտի, սեիգ, մաղ, խզամի, խզան (արու), սև ոչխար, կտի, կտիկ, քոլիկ (անեղջյուր), թանիկ (սպիտակ ականջներով), մուրիկ (իր ուլին չկերակրող, չընդունող), ամիկ, ամլիկ, ալոջ, չափիչ (չափիծ), կիսկ (մեկ տարեկան), դուբրի, քոռիդ (երկու տարեկան արու), պիճակ (2 տարեկան ծնած), հվուր (2-3 տարեկան՝ արու), սեբրի (3 տարեկան՝ արու), չաբրի (4 տարեկան՝ արու), բզաք (կռտած)²: Այսպիսի մանրակրկիտ կիտ բնութագրումներն ու անվանումները վկայում են միմիայն այծ-«եղնիկի» բացառիկ դերակատարության ու նշանակության մասին: Մինչ խնդրի քննարկումը ներկայացնենք Եղնիկի (= այծիկ = ուլ) պաշտամունքի մասին հայոց առաջին գրավոր աղբյուրներում պահպանված տեղեկությունները, որտեղ երբեմն նրբորեն գաղտնագրված են աստղագիտական պատկերացումները, ինչպես որ Անգղի պաշտամունքի դեպքում էր³:

¹ Հր. Աճառյան, ՀԱԲ, Հ. 1, էջ 169

² Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 34:

էր¹:

Մովսես Խորենացին իր Հայոց պատմության մեջ հիշատակում է 2-րդ դարի ամենանշանավոր հույն աստղաբաշխ, մաթեմատիկոս և աշխարհագիր Պտղոմեոս Կլավդիոսին², ում հրամանով «ասպարեզներով չափեցին մարդկանց բնակության վայրերը, մասամբ նաև ծովը և անբնակ վայրերը՝ Այրեցյալ գոտուց մինչև Քիմյուռոն»³: Այստեղ պետք է հասկանալ, որ ասպարեզներով չափել են նաև երկինքը (= ծով), իսկ անբնակ վայրեր, այրեցյալ գոտի ասելով՝ նկատի են ունեցել ամառը բնորոշող կենդանակերպերը՝ անապատը, «ԱՌՅՈՒԾ» (այրեցյալ գոտի - թեժ ամառ), «ԱՅԾԵՂՋՅՈՒՐ» և «ՕՁ» (ձմեռ - Քամյուռոն) համաստեղությունները: Թեև Ստ. Մալխասյանը Քիմյուռոնը թարգմանել է հունարենով ձմեռային, սառուցյալ երկիր⁴, ինչը հուշում է, որ այն ոչ միայն աշխարհագրական տարածք է, այլև եղանակի կամ ժամանակի մասին վկայություն: Մեր կարծիքով, այստեղ ուղղակիորեն պետք է հասկանալ, որ Քիմյուռոնը առասպելական Քիմեռան է, որը, ըստ մ. թ. ա. 480 թվականի բրոնզե արձանիկի, տերատամորֆ – եռակազմ, եռազլուխ գոյություն է (առյուծ, այծ, օձ)⁵: Եթե վերածենք աստղագիտության, այն միավորում է «ԱՌՅՈՒԾ», «ԱՅԾԵՂՋՅՈՒՐ» կամ «ԿԱՌԱՎԱՐ» և «ՕՁ» համաստեղությունները: Հայելային անդրադարձով ամառ-ձմեռ դրսևորումներն են: Քիմեռան բոց է արտաշնչում և ամայացնում է երկիրը՝ վերածելով անապատի: Ընդգրկում է ամռան ու ձմռան հետ կապված կենդանակերպերը: Հիշենք, որ Այրեցյալ գոտին ու Քիմերային հիշում են նաև Եղիշեն, Անանիա Շիրակացին⁶: Անանիա Շիրակացին գրում է, որ «Այդ (Այրեցյալ) գոտում են գտնվում **մարդկանց հոգիները,.....հավատակիցների հոգիներ**»

¹ Տե՛ս Գ. Սիմոնյան, Անկաստեղ (տոմարական մի եզրույթի հետքերով), Աստվածաբանության ֆակ., Տարեգիրք, Եր., 2017, էջ 36-66:

² **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադեմիկոս Ստ. Մալխասյանի, Եր., 1961, էջ 133, տե՛ս նաև էջ 373 թիվ 62 ծանոթագրությունը:

³ Նույն տեղում, էջ 133:

⁴ Նույն տեղում, էջ 374, ծան. 63:

⁵ Мифы народов мира, т. 2, ст. 592.

⁶ Աստղաբաշխության մասին, Տիեզերագիտություն, **Ա. Շիրակացի**, Մատենագրություն, Եր., 1979, էջ 119:

րը»¹: Ամառային արևադարձի ժամանակ Քիմեռային սպանում է Բելլերոֆոնտը, որը երկինք է բարձրանում Պեգասին հեծած ու հարձակվում նրա վրա: Թե ինչ է մտածում Մովսես Խորենացին առասպելների մասին, գրում է իր պատմության Պարսից առասպելներից գլխում: Նա պարսից առասպելները համարում է սուտ, շինծու, անմիտ, անհանճար զրույցներ, որոնց հակադրում է հույների առասպելները. «Մի՞թե սրանք հույների պերճ, ողորկ, **պատճառաբանված** առասպելներն են, **որոնց փակ այլաբանորեն թաքնված են ճշմարիտ իրողություններ** (ընդգծումը մերն է), բայց դու մեզ ասում ես, որ իմաստ տանք նրանց անիմաստությանը և անզարդը զարդարենք»²: Կարևորն այստեղ այն է, որ Մովսես Խորենացին գիտի, որ առասպելներում այլաբանորեն թաքնված են **ճշմարիտ իրողություններ և դրանք պատճառաբանված են**: Իսկ ինչ ճշմարիտ իրողություններ նկատի ունի հեղինակը: Մի՞թե պատմական տեղեկություններից զատ նաև ժամանակի տիեզերաճանաչողությունը, աշխարհի մոդելավորումը՝ հենված աստղագիտության վրա, որը ժամանակի կարևոր նախագիտություններից էր և զարգանում էր աստվածաբանության ընդերքում, դառնալով դրա հիմնասյուններից մեկը, և որի հետ էր կապված բնատնտեսության ու մարդկային կյանքի կազմակերպումը: Թեև Մովսեսը պարսիկների առասպելները համարում է անմտություն, դրանց մեջ միտք է դնում և պատմում. Բյուրասպի Աժդահակը պարսիկների նախնին է: Խորենացին ասում է. «Ես այս Բյուրասպի անունը ճանաչում եմ Կենտավրոս Պյուռիդա, որ գտել եմ քաղղեական մատյանում»³: Դարձյալ առնչվում է աստղագիտության հետ, քանզի քաղղեական մատյաններից է վերցրել: Համապատասխանում է «ԿԵՆՏԱՎՐՈՍ» կենդանակերպին: Եթե քաղղեական մատյաններից է օգտվել Մովսես Խորենացին, ապա աստղագիտական բնույթի մատյաններ են եղել դրանք, որոնց մասին հիշատակություն կա Աստվածաշնչում:

Դառնանք մեր բուն խնդրին, այն է՝ «**Ելաստեղ**» տոմարական եզրույթի քննությանը, ինչին կնպաստի նաև Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ պահպանված Արտաշեսի ու ալանների պատերազմի պատմությունը, որին հմտորեն շաղախված է մեր դիցաբանությունը: Ա-

¹ Ա. Շիրակացի, նշվ. աշխ., էջ 119:

² Նույն տեղում, էջ 142:

³ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 142-143:

լանների ու հայերի միջև ծագած պատերազմի ընթացքում Արտաշեսը քշում է ալաններին երկրից՝ գերելով նրանց արքայազնին: Նրանք բանակում են Կուր գետի հյուսիսային կողմից, իսկ Արտաշեսը՝ հարավային: Այստեղ ևս պատմականից զատ տարածա-ժամանակային հակադրություն է՝ հյուսիս-հարավ: Ալանները կապված են **հյուսիսի** հետ, Արտաշեսը՝ **հարավի**: Այս հակադրության մեջ ժամանակային կարող է համարվել եղանակային ամառ – ձմեռ եղանակների հետ զուգադրումը: Հարավ՝ ամառ-աշուն, Արտաշես, իսկ հյուսիսը՝ ձմեռ-գարուն, ալաններ (Սաթենիկ): Սակայն հիշենք, որ հնարավոր է երկնքում նաև հայելային անդրադարձերը: Արտաշես արքայի և Սաթենիկի մասին վիպերգը բազմիցս է մեկնաբանվել տարբեր տեսանկյուններից: Դիտարկենք ևս մեկ տեսանկյունից, այն է՝ տոմարական: «Չայս տեղի առասպելաբանելով վիպասանքն յերգելն իրեանց ասեն. «**Հեծաւ արի արքայն Արտաշէս** ի սեան գեղեցիկ, եւ հանեալ զոսկէաւղ շիկափոկ պարանն և անցեալ որպէս **զարծուի սրաթեւ** ընդ գետն, եւ ձգեալ զոսկէաւղ շիկափոկ պարանն՝ ընկեց ի մէջք արիորդին Ալանաց և շատ ցաւեցոյց զմէջք փափուկ արիորդին, արագ հասուցանելով ի բանակն իւր»¹: Այս հատվածում այնպես են միահյուսված առասպելն ու վիպերգը, որ դարձել են մի օրգանական միացություն: Թեև վիպերգում կատարվել է որոշ ապաստասպելականացում, գործողությունների տեղն ու ժամանակը լոկալացվել ու որոշակի են դարձել՝ կապվելով պատմական անձերի՝ հայոց Արտաշես թագավորի ու ալանների արքայադուստր Սաթենիկի անունների հետ, գետի ափին, սակայն այստեղ պահպանված են առասպելներին բնորոշ իմաստաբանությունը, կազմաբանությունն ու տեղանքագրությունը, «գետափնյա արկածը»², տոտեմները (արծիվ, սև ձի, եղնիկ (այծիկ), որը լավագույնս ծածկագրված է), յուրային – օտար հակադրությունը, դրսևորված է գետի³ սահմանային գործառույթը: Ինչպես միջերում, այստեղ էլ հստակորեն գետը (Քուռ կամ Արաքս) սահմանագիծ է դարձել սեփական և օտար տարածքների միջև, այլև աշխարհի (հյուսիս) ու անդրաշխարհի (հարավ) միջև⁴:

¹ Մ. Խորենացի, նշվ. աշխ. էջ 19, 27-28:

² Ա. Պետրոսյան, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգաձագման խնդիրը, Եր., 1997. էջ-111-112:

³ Сказки и мифы, МНМ, т. II, М., 1999, с. 375.

⁴ Նույն տեղում, с. 376:

Վիպերգում լավագույնս պահպանվել է աղջիկ փախցնելու առասպելությամբ, որն ասես Հոմերոսի «Իլիականում» Հեղինեին (= Ելենա «եղնիկի ձագ») փախցնելու պատմության հայկական տարբերակն է¹: Հայոց վիպերգի Սաթենիկի եղբորը, ում ստրկացրել է Արտաշեսը, կարելի է համարել Սաթենիկի երկվորյակը²: Այլաբանորեն այդ ստրկացումը վերաբերում է նաև Սաթենիկին, իբրև երկվորյակի մի մասը: Ստրուկը³ հակադրված է առասպելական թագավորին, նա իր սեմանտիկայով մահվան կերպար է՝ հակադրված արքա կյանքին: Հետևելով առասպելաբանական արևային դպրոցի տեսությանը՝ կարող ենք ասել, որ այս դեպքում գործ ունենք հերոսների աստղային բնութագրի հետ, որը բնորոշվում է ոչ միայն պարբերականությամբ, այլև այստեղ ստրկացումը խորհրդաբանում է լուսատուի ժամանակավոր մահը, անկումը, մայրամուտը, լույսի ու ջերմության անհետացումը, որն այս դեպքում մասնակի է, կիսով չափ: Սաթենիկը եղբոր հետ լուսային աստվածություններ են, որ ապրում են մահվան փուլ, որին հաջորդելու է փախցնելը, ապա հարսանիքը, որն անցումային ծես է և ուղեկցվում է տարածաժամանակային սահմանների հատումով⁴, որին հետևում է ազատագրումն ու հարությունը, ապա համբարձումը: Եվ Արտաշեսի գետի այն կողմից նրան փախցնելը խորհրդաբանում է նրան անդրաշխարհ տանելը կամ հակառակը՝ անդրաշխարհից դուրս բերելը:

Արտաշես թագավորի աստղային ծագման առհավատջյա կարող ենք համարել նաև նրա դիմանկարներով դրամների վրա ութթևյան աստղի պատկերը:

Քանի որ «Անկաստղը» մենք կապել ենք ամառային եռանկյունին կազմող «ՀԱՐՁԱԿՎՈՂ ԱՐԾԻՎ (Անգղ)»՝ «ՔՆԱՐ», «ԱՐԾԻՎ», «ԿԱՐԱՊ» համաստեղությունների գլխավոր աստղերի հետ. այստեղ Արտաշեսն ուղղակիորեն հարձակվող արծիվ-անգղն է⁵, որ փախցնում է Սաթե-

¹ Մ. Գորկու Պառավ Իգերգիլի պատմության մեջ ևս այս առասպելությունն ենք հանդիպում, երբ արծիվը աղջիկ է փախցնում:

² Երկվորյակներ կարող են լինել ոչ միայն եղբայրները, այլև քույրն ու եղբայրը, ընկերները, տերն ու ծառան, մահկանացուն և աստված (Քճ. ՄՄՄ, Կ. II, ստր. 360-361):

³ Քճ. ՄՄՄ, Կ. II, ստր. 360-361:

⁴ ՄՄՄ, Կ.2, ս. 235:

⁵ «ԱՆԿԱՍՏԵՂԻՆ» նվիրված հոդվածում այս վիպերգը չենք ներկայացրել, այստեղ քննելու նպատակով:

նիկին:

Պարզված է, որ Սաթենիկի ամպրոպային ամուսնու խորհրդանիշներից էր արծիվը¹: Քերթողահայրն այս պատմությունը համարելով առասպել՝ փորձում է նաև նորովի՝ քրիստոնեական առասպելաբանությանը հարիր կերպով մեկնել այն՝ խմբագրելով ու սրբագրելով **ալանների, ոսկեղ շիկափոկ պարանի** և այլնի մասին հնոց հեթանոսական հավատալիքները, որոնք կարող էին ընդհանուր լինել հայ և ալան ժողովուրդների համար՝ իբրև հնդեվրոպական ժողովուրդներ: Մովսես Խորենացին մեկնում է. «Որ և ճշմարտութեամբ ունի այսպէս: Քանզի պատուեալ է առ Ալանս մորթ կարմիր՝ լայքա շատ² եւ ոսկի բազում տուեալ ի վարձանս՝ առնու զտիկին արիորդն³ Սաթենիկ: Այս է ոսկեաւղ շիկափոկ պարանն»⁴:

Աստղագիտական տեսանկյունից Արտաշեսն ինքը «ՀԱՐՁԱԿՎՈՂ ԱՐԾԻՎ – ԱՆԳՂ» համաստեղությունը կամ դրա α Վեգա աստղն է, իսկ Օսկեղ շիկափոկ պարանը, որով փախցնում է Արտաշեսը Սաթենիկին, ոչ այլ ինչ է, քան «ՀԱՐՁԱԿՎՈՂ ԱՐԾԻՎ – ԱՆԳՂ» կամ «ՔՆԱՐ» համաստեղության «Օղակ» մոլորակաձև միգամածությունը⁵:

Պատմահայրն իր մեկնության մեջ հրաշալի մանրամասներ է հաղորդում երևույթների առասպելաբանաստեղծական ընկալումների վերաբերյալ: Նախ խոսենք ալանների տոհմանվան մասին, ինչը միանշանակ պետք է համապատասխանի նրանց էպոնիմի անվանը, ինչը, մեր կար-

¹ **Տ. Դալայան**, Հայոց վիպական Սաթենիկ թագուհու կերպարի ծագումնաբանական հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 2002, 2 (160), էջ 201:

² Լայքա շատ բառակապակցությունը ունի մի քանի տարընթերցվածներ՝ լաքաշատ, դաքաշատ, լաքայ շատ, լայքայ շատ, այքա շատ, և այլն, որոնք վկայում են այն մասին, որ հետագա գրիչները խնդիր են ունեցել այս արտահայտությունը հասկանալու և յուրաքանչյուրը գրել է յուրովի՝ իր հասկացածին համապատասխան: Սակայն դրանով այսօր կարող են օգնել ինչ-ինչ ենթադրություններ անելու:

³ Տիկին բառի հետ **արիորդ** բառի գործածությունը, մեր կարծիքով, շատ կարևոր տեղեկություն է թաքցնում այս դեպքում: Երկուսը միաժամանակ միասին գործածելը, գուցե թվա, թե սովորական ոճ է, սակայն այն տեսանկյունից, որ մենք դիտում ենք Սաթենիկին, այն է՝ այծիկ-ուլ-եղնիկ կամ եղջերվաձագ=հորթ, որը **արի** որդին է, ապա ուղղակիորեն առնչվում է **Auriga, Aur «ԿԱՌԱՎԱՐ» համաստեղության Կապելլա աստղի հետ, այսինքն Aur-ի ար-ի որդին՝ օրիորդը:**

⁴ **Մ. Խորենացի, նշվ. աշխ.**, էջ 128:

⁵ **Ս. Ներսիսյան, նշվ. աշխ.**, էջ 44:

ծիրով, ձևավորվել է հնդեվրոպական եղնիկ նշանակող արմատով՝ ստանալով **ալան** ձևը: Եվ ինչպես որ հայ էթնոսն իր անունն ստացել է իր նախահոր Հայկի անունից, որին համապատասխանում է Օրիոն-Հայկ համաստեղությունը, այդպես էլ ալանների էպոնիմը պետք է, որ կապված լինի եղջերվի, եղնիկի կամ ուլ –այծիկի վերաբերյալ համահնդեվրոպական պատկերացումների հետ, ինչը նույնական է նաև հայոց համար, և իր անունն ստացել է եղնիկ¹ անունից, որի հնդեվրոպական արմատը՝ *ol, *el, ևն, որին պետք է համապատասխաներ նույնանուն աստղը:

Դառնանք դարձյալ Մովսես Խորենացուն՝ «պատուեալ է առ Ալանս **մորթ կարմիր՝ լայքա շատ**» հատվածը պետք է հասկանալ այսպես. քանի որ ալանների տոտեմական կենդանին եղել է կարմիր մորթով պատված ու շատ լայքաներ ունեցող կենդանին, այսինքն եղն-եղնիկը, ապա նախ՝ նրանց տոհմանունն առաջացել է հենց այդ տոտեմական կենդանու անունից՝ հնդեվրոպական ol կամ el՝ «եղնիկ-եղջերու» և «շիկակարմիր» իմաստից: Իսկ հատկապես եղջերվի մի տեսակը՝ եղնիկմարալը՝ կարմիր կամ շիկակարմիր մորթով ու սպիտակ լայքաներով է, հատկապես նորածինները, և միանգամայն համապատասխանում է Մովսես Խորենացու տեղեկությանը: Եվ եթե համոզիչ է այս բացատրությունը, ապա խոսքը վերաբերում է շիկակարմիր մորթ և շատ լայքաներ (գուցեև դիտվել են իբրև աստղերի խորհրդանիշներ) ունեցող եղնիկին՝ **մարալին (= վայրի ոչխար) կամ այծյամին**, որով էլ առասպելաբանաստեղծական մտածողությամբ ասես կապվում է իգական կարևորագույն աստվածությանը, որի խորհրդանիշը տվյալ դեպքում դարձել է Սաթենիկը, ում անվան ստուգաբանությանը քիչ ավելի ուշ կանդրադառնանք:

Սաթենիկին վերագրվել են զանազան առասպելական պատմություններ, ինչպես և նրա հետ կապված դեպքերը իրավամբ մեկնաբանվել են դիցաբանական կաղապարներով²: Հայոց վիպասանքի Սաթենիկի առասպելախառն պատմություններն աներկբայորեն համահունչ են հյու-

¹ Օսեթական դիցաբանության ձևավորմանը մասնակցել են ալանները, սկյութներն ու սարմատները, որոնց տոտեմական կենդանին է եղջերուն, որն անխոցելի է, իսկ նետը նրա կողմ ուղղելիս փոխակերպվում է այլ գոյության, հաճախ մարդու: Խորենացու՝ ալանների արքայադուստր Սաթենիկի մասին տեղեկություններում նկատելի է նարթական՝ սատանայի մասին շարքի ազդեցությունը: Տե՛ս Осетинская мифология, МНМ, т. 2, стр. 265-266:

² **М. Элиаде**, Космос и история, М., 1983, с. 3.

սիսկովկասյան և, հատկապես, օսական Սաթանայի մեր օրերում գրառված դրվագներին¹: Սաթենիկի անունը քննվել է հնդկական, արխագական, օսեթական և այլ ազգերի դիցաբանական պատմությունների համատեքստում²: Սաթենիկի անվանը համապատասխանում են հնդկական Սաթյավաթին, նարտական Սաթանա-Սաթանեյը, ով ծնում է **երկվորյակ** (հմմտ. Իլիա-Ռեա Սիլվիա): Հնդկական Սաթյավաթին կապված է երկվորյակության հետ, ունի երկվորյակ եղբայր, որի մակդիրը Կալի է, որ նշանակում է «մուգ, թուխ»: Սաթանեյի որդին էլ ունի **սև** մակդիրը: Հայոց Սաթենիկի որդին էլ՝ Արտավազըրը, **սև** է իր էությանը: Սաթենիկի անվան Սաթ արմատը «սև» է մեկնում Ա. Պետրոսյանը³:

«Հայոց մեջ սաթը հանդես է գալիս որպես սևի խտացում, հմմտ. *սաթի նման սև* արտահայտությունը⁴ (համապատասխան անգլ. jet-black-ին): Եվ սաթն այստեղ պետք է հասկացվի ոչ թե որպես ռուս. янтарь, անգլ. amber «քարացած բրածո խեժ», այլ *սև սաթ, գիշեր, գիշերաքար, գազալ, խեժածուխ*, ռուս. гагат, гишер, черная яшма, гишма, անգլ. jet «սև սաթ»՝ «բրածո ածխի մածուցիկ տարատեսակը» նշանակությամբ⁵:

Ուշադրություն դարձնենք ևս մեկ գունային իմաստի, որ կարող է կապվել Սաթենիկի անվանը: Սաթեն-Շատեն (шатен) «խարտյաշ» «շէկ, դեղնակարմիր» իմաստով, որը նոր գրականում համարվում է շագանակագույնի⁶ և շէկի մեջտեղում գտնվող գույնը⁷: Խարտյաշ բառի ստուգաբանության ժամանակ Գ. Ջահուկյանը հարցականով է դնում կապը «խարել», «այրել, դաղել» արմատի հետ, առավել քիչ հավանական է հա-

¹ **Տ. Դալայան**, Հայոց Սաթենիկ թագուհու կերպարի ծագումնաբանության հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 2002, 2 (160), էջ 191:

² **Ա. Պետրոսյան**, նշվ. աշխ., 1997, էջ 110-117:

³ **Ա. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 110-116: Սաթ-«հյուսիսային ոսկի»-քար, որ շփելիս էլեկտրականանում է, իսկ լուցկուց բոցավառվում: **В. Шуман**. Мир камня (I-II), т. I, М. 1985, с. 60, т. II, 212-214: Բաց դեղին, կարմիր, կապույտ, սև գույներով է հանդիպում, ամենահարգին կամ արևագույն սաթն է: Սև սաթը կոչվում է գազաթ, որին հայերն անվանում են գիշեր:

⁴ **Ա. Պետրոսյան**, Հայկական և հյուսիսկովկասյան..., էջ 44:

⁵ **Ա. Պետրոսյան**, Հայկական Սաթենիկը և նրա կովկասյան զուգահեռները,

⁶ Հմմտ. ֆրանսերեն châtain «շագանակագույն»-**Ե. Տեմիրճիպաշեան**, Ֆրանսերէնէ հայերէն բառարան, Պէյրուֆ, 1983, էջ 224:

⁷ **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. 2, էջ 349:

մարում կապը գունանիշ *ker «մուգ գույներ» նշանակող արմատի հետ:¹

Սաթյավաթին ծնում է սև որդի՝ Կրիշնա Դվայայայանային: Հնդկերենում Սաթյավաթի անունը նշանակում է «ճշմարիտ», այն ծագում է *snt-yo դերբայական նախածնից, որի արմատն է *es-» **լինել**»²-ը (հմմտ. Մարիամ Աստվածածնինը՝ «իսկուհի»): Միջնադարում Մարիամ Աստվածածնին պատկերել են **եղնիկի**, իսկ Քրիստոսին **եղնիկի ձագի** տեսքով³:

Հայոց վիպական Սաթենիկ թագուհու կերպարի ծագումնաբանության խնդիրը պարզված է, այն հայկական ծագում ունի⁴: Աբխազական նարթյան պատումների համաձայն նա դյուցազնուհի է՝ Հայխուզ կամ Խարխուզ առասպելական ցեղից, ովքեր իրենց ուժով ժամանակին գերազանցել են նարթերին, նրանք նաև նարթերի եղբայրներն են:⁵ Օսերի Սաթանան կամ Շաթանան (հմմտ. satana) աննման գեղեցկությամբ ուկեծամ կին է, որի խոսքերը արևի ճառագայթներից էլ ուղիղ են ու թրից էլ սուր: Յոթհարկանի աշտարակին նստած՝ Սաթանան իր երկնային հայելու (հմմտ. Վեներայի խորհրդանշանի հետ, ինչպես և հեքիաթի քնած դշխուհու խորթ մոր հայելին)⁶ մեջ տեսնում է աշխարհում կատարվող ամեն բան և ոչինչ չի վրիպում նրա աչքից: Երկնային հայելու առկայությունը վկայում է, որ այն կարող է կապված լինել իր հայելային, այն է՝ հակառակ պատկերի հետ, օր., եթե գունային սև է, կարող է ինքը շեկ լինել ևն: **Սաթանայի մուշտակը** ոսկուց է⁷, պատվավոր գահավորակն է

¹ Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 323:

² Լինել իմաստն ուղղակի հիշեցնում է Էրիմ-Եհովա անունը, որը նշանակում է «Ես եմ, որ եմ (կամ)». Եմը և կամ-ը պակասավոր բայեր են և կարող ենք արտահայտել նաև լինել դերբայով, որն անկանոն է (եղա, եղար...ևն, իսկ բարբառային՝ էլա, էլար ևն):

³ Ա. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ-111-112:

⁴ Տ. Դալայան, նշվ. աշխ., էջ 191:

⁵ Նույն տեղում, էջ 194:

⁶ Հայելին առանց ստելու ասում է, թե ով է ամենագեղեցիկը: Քանի քնած է արքայադուստրը, խորթ մայրն է ամենագեղեցիկը, իսկ երբ արքայազնի համբույրից արթնանում է արքայադուստրը, նա է ամենագեղեցիկը, ինչպես որ ամենագեղեցիկ մահկանացու կինը Հեղինեն էր, որի համար ծագում է Տրոյական պատերազմը: Քնած դշխուհուն արթնացնելը ճիշտ և ճիշտ Սաթենիկին փախցնելուն է համապատասխանում, այսինքն անդրաշխարհից նրան դուրս բերելուն:

⁷ Սաթանայի ոսկե մուշտակը ուղղակիորեն չի՞ հուշում, թե այն արգոնավորդների որոնած ոսկե գեղմն է, ինչը պահպանում էր վիշապը: Այստեղից չի՞ ծագում արդյոք Սաթենիկ - վիշապ Արգավան առասպելությունը: Ոսկե գեղմնի հափշտակելը վիշապի մոտից

նրա նստատեղը. նա կանանցից լավագույնն է, իսկ նրա ամուսինը լավագույնն է տղամարդկանց մեջ: Սաթանեյա-գուաշան ոտքի հարվածով տապալում է ծառը, շրջում ժայռաբեկորներ, դրանց մեջ մատով ծակ բաց անում (ջաղացքար) և դրանցից սարքած ճախարակով բուրդ է մանում ու կարում իր հարյուր (հմմտ. Եղիայի սպանած զինվորների թվին՝ 50+50) որդիների զգեստները: Եթե ժամանակային առումով դիտենք որդիներին, նրանց թիվը համարյա թե 3 ամիս և մի ամբողջական եղանակի օրերի թիվ է ներկայացնում: Մանելու ժամանակ նարթերի քարե տունը ցնցվում է¹: Հարդագողի ճանապարհն առաջացել է նրա՝ ամուսնու անկողինը հարդարելու համար հափշտակած հարդից²: Համընկնում է հայոց վիշապաքաղ Վահագնին, այն է՝ ունի վիշապային բնույթ: Հարդի գնալուց առաջ եռանկյունի հաց է թխում, որ Սաթիբոժուզ է կոչվում: Սաթիբոժուզը **Ամառային (աշնանային) եռանկյունն** է՝ անկյունային **Վեգա, Դենեբ ու Ալտաիր** աստղերով³: Վայնախական դիցաբանությանն է բնորոշ Սաթանեյին համաստեղությունների առաջացման հետ կապելը: Ըստ ծննդյան առասպելների՝ Սաթանայը **երկավոր** է՝ նա կիսածովային-կեսերկրային էակ է: Սաթենիկը, ըստ որոշ պատումների, փրփրածին է, ինչպես Աֆրոդիտեն, կամ Աստղիկն ինքն է: Սաթանայի ծննդյան առասպելում համադրված են Սաթանայն ու Լուսաստղը⁴: Տ. Դալայանը գրում է. «...Սաթանան, թերևս, նույն շարքի մեջ է կանգնում Վեներա մոլորակը խորհրդանշող Աստղիկի և հինարևելյան համարժեքների (Իշթար-Սաթանեյ) հետ»⁵: Ընդունված է ամենուր հայոց դիցաբանության Աստղիկին համադրել հունական դիցաբանության Աֆրոդիտեի և հռոմեական դիցաբանության Վեներայի հետ: Սակայն եթե այս անվանումների տակ ընդունենք համապատասխան աստղերն ու մոլորակները, այս դեպքում այնքան էլ ճիշտ չի լինի Աստղիկը համարել Վեներա մոլորակի համարժեքը, դրան էլ զուգահորել Արուսյակ-Լուսաստղ: Սակայն այստեղ նույ-

կարելի է նույնացնել Սաթենիկին փախցնելու հետ, և բնական է, որ ժամանակի հետ Սաթենիկը պետք է ձգտեր վերադառնալ իր բնական միջավայրը՝ վիշապի պաշտպանության տակ:

¹ Տ. Դալայան, նշվ. աշխ., էջ 194:

² Նույն տեղում:

³ Ա. Մ. Танкиев, Села Сата: МНМ, с. 424.

⁴ Տ. Դալայան, նշվ. աշխ., էջ 198:

⁵ Նույն տեղում:

նիսկ բառակազմորեն Աստղիկը հուշում է փոքրի իմաստ, այլապես կկոչվեր աստղ: Սաթենիկը՝ հայոց Աստղիկն է, հունական դիցաբանության Արտեմիսը, որ համապատասխանում է Կապելլային և ոչ թե Վեներային, և, ըստ այսմ, Արուսյակ-Լուսաստղը Կապելլան է, որը, մեկ անգամ էլ ընդգծենք, միակ աստղն է, որ ունեցել է իր համապատասխան խորհրդրանշանը, ինչը վկայում է, որ ժամանակին այն աստղագիտության մեջ կարևորագույն տեղ է զբաղեցրել: Չի բացառվում, որ իր առավելագույն պայծառությանը 240000 տարի և Երկիր մոլորակից 28 լուսային տարի հեռավորության վրա գտնված Կապելլայի¹ մասին եղած վերհուշների արձագանքն է խտացված Սաթենիկի կերպարում:

Սաթանեյի հրամանով Սոսրըկոյին բռնում և մեխում են² պատին, ինչպես որ Արտավազդին են շղթայում Մասիսի քարանձավում³: Օսերը հիշում են Արտավազդին, սակայն նրանց պատկերացումներում նրան աստված գամել է Լուսնին, որից էլ առաջանում են Լուսնի խավարումները: Ասենք, որ Լուսնի և Արևի խավարումները տեղի են ունենում միայն մի հարթության մոտ, որի վրա տեղակայված են երկնքի 12 հայտնի կենդանակերպերը: Եվ այդ տարածքում Արևի ու Լուսնի խավարումների պատճառով է, որ հարթությունը կոչվել է **խավարածիր**:

Ինգուշական հին առասպելներում ևս Սաթենիկին համապատասխան Սելա Սաթայի հետ են կապում Ծիր կաթնի ու Ամառային եռանկյունու երեք աստղերի՝ Վեգայի, Դենեբի, Ալտաիրի առաջացումը, իսկ եռանկյունին ինգուշները համարում են **Սաթայի եռանկյուն հաց**⁴: Եռանկյուն հացը, որի եզրերը այրված են ու կրում է Սաթենիկի անունը, ինչպես տեսանք հայոց մեջ ունի իր տարբերակը՝ **ալյգողահաց կամ հոգեհաց**:

Ադիգեյական Սատանեյի խնդրանքով Արևը կանգ է առնում: Այս

¹ Звезды, ред. состав **Б. Г. Сурдин**, М., Изд. физикомат. Литературы, 2008, с. 34.

² Մեխելու հանգամանքը առավել բնորոշ է Հիսուս Քրիստոսին: Նրան են խաչի վրա բևեռում: Մեխի հոմանիշը բևեռն է, որն էլ իր հերթին խոսում է բևեռային աստղերի մասին, որոնք ասես անշարժ մեխված են երկնքում: Պրեցեսիայի հետևանքով բևեռային աստղ են դառնում տարբեր համաստեղությունների՝ «ՎԻՇԱՊի» Տուրբան, «Ցեֆեոսի» երեք տարբեր աստղեր, «ԿԱՐԱՊի» Դենեբը, «ՔՆԱՐի» Վեգա աստղերը: Հիմա «ՓՈՔՐ ԱՐՋ» համաստեղության Կինոսուրա («Շան պոչ») աստղն է հյուսիսային բևեռային աստղը: Տե՛ս **Ս. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 25:

³ **Տ. Դալայան**, նշվ., աշխ., էջ 209:

⁴ Сатибожолг. МНМ, т. 2, ст. 426.

պատկերացումն առկա է նաև Հին Կտակարանում՝ Հեսու Նավեն է կանգնեցնում արևը երկնքում:

Սա պարզ ժամանակային դրսևորում է: Գարնանային օրահավասարից մինչև ամառային արևադարձ ցերեկվա տևողությունը երեք ժամով ավելանում է, և ցերեկն այնքան է երկարում, որ այս շրջանում հնարավոր է մտածել, որ Արևը որոշ ժամանակ կանգ է առել երկնքում: Ամռանն արեգակը տեղափոխվում է ուղիղ հյուսիսային կողմը՝ ձգելով, երկարացնելով ցերեկվա տևողությունը¹: Նշանակում է ամռան ընթացքում առավել կարևորված են հյուսիսային աստղերը: Սաթանեյը կապված է ամառնակեսի հետ, և, ինչպես նկատեցինք, Սաթենիկն ուղղակիորեն առնչված է աստղերի ու աստղագիտական իրողությունների հետ՝ Ծիր կաթին, Ամառային եռանկյունի, Խավարածիր, ինչը հիմնավորում է մեր կարծիքը, թե Սաթենիկը ևս աստղ է և գտնվում է հարաբերակցության մեջ ինչպես Ծիր կաթնի ու Ամառային եռանկյունու, այնպես և Խավարածրի հարթության հետ, և նա երկնքի հյուսիսային կիսագնդի աստղերից մեկն է:

Աբխազական էպոսում Սաթանեյը տեսնում է Երջխուփն կամ Նարջխուփն, ինչպես որ հայոց վիպասանքի Սաթենիկն է տեսնում «**Ի բարձիցն Արգաւանայ**»²: Իրապես էլ, ինչպես նշում է այս խնդրին անդրադարձած վերջին հեղինակներից Լ. Սիմոնյանը, «այս մութ հատվածը փորձաքար է հանդիսացել մի շարք հայագետների համար, թեև նրանցից շատերը համոզված են եղել, որ խոսքը բույսերի մասին է: Միակ ճանաչելի բույսն այդ դեպքում խավարծի-խավարծիլն է: Թերևս, կախարդական, հմայական ծաղկի մասին պատկերացումների ենթատեքստով այս հատվածը մեկնաբանում է Ք. Պատկանյանը, որը գտնում է, որ Սաթենիկ տիկնոջ տեսնանքը կապվում է սիրո հմայության հետ՝ բարձի մեջ բուրումնավետ ծաղիկներ դնելով»³:

Լ. Սիմոնյանը գրում է, որ ժողովրդական նյութերում իրեն չի հաջողվել խավարծիլի կամ ունանդենու հմայական կիրառության վերաբերյալ

¹ Ան. Շիրակացի, նշվ. աշխ., էջ 108:

² Տ. Դալայան, նշվ. աշխ., էջ 67:

³ Սո. Մալխասյանց, Ծանոթություններ Մովսես Խորենացու Պատմության աշխարհաբար թարգմանության//Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., ԵՊՀ հրատ., 1981, ծան. 90, էջ 336:

վկայություններ գտնել, ապա շարունակության մեջ մեկնաբանում է, թե «Սաթենիկն ուղղակի սիրում էր պատվական խավրժիլը, որը բերվում է Արգավանին պատկանող բարձունքներից»¹:

Հեղինակը հիմնվելով ակնեցիների, կարնեցիների և այլոց կողմից խավարժիլին տրված «իշխուն»² անվանմանը, ենթադրում է, թե «գուցե Սաթենիկը տենչում էր «տի-ց», այսինքն մեծ, հատուկ, իշխուն, զորավոր խավարժիլ»³:

Լ. Սիմոնյանը խավրժիլը դիտում է որպես գարնանամտի ցուցիչ, որը ծլում է ձնհալից անմիջապես հետո⁴: Հեղինակը այստեղ կարևոր միտք է արձարձում՝ առնչելով այն տոմարական ժամանակի հետ:

Արխագական Երչխու-Նարչխուն նույն հայոց Արգամ-Արգավանն⁵ է: Հնդեվրոպական *arg արմատը, որն արտահայտված է նաև երչ, նարչ ձևերով, գուցե և արգ-արջ (արտասանական արչ) համեմատելի է խուռի-ուրարտական «արծաթ» իմաստին⁶: Եթե արծաթը դիտենք իբրև ժամանակի մետաղական ծածկագիր, կառնչվի ամառ եղանակի հետ, որն այժմ սկսում է **մայիսի 22-ից՝ «ԵՐԿՎՈՐՅԱԿ»** կենդանակերպից, իսկ 11-րդ դարում՝ մայիսի 16 = մարտի 9-ից: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Արգավան անձնանունը, որը պարսկերենում իբրև հասարակ անուն՝ արգավան, ունի իր հոմանիշը՝ արգամ, որը հայերենում դարձյալ անձնանուն է (երկուսն էլ առնչվում են եղրևանու՝ յասամանի կամ հասմիկի հետ), իսկ վրացերենում պարսկերենից փոխառված արղըվանի բառը նշանակում է «շառագույն կարմիր»⁷: Այստեղ բառը կա՛մ բուսական, կա՛մ գունային կողմ է, որը հայերենում հատուկ անուն է դարձել:

Եթե Արգավան անվան մեջ նկատենք գունային կամ բուսական ժամանակային ցուցիչներ, ապա կունենանք շառագույն – կարմիր գույնը և յասաման կամ հասմիկ ծաղիկը, որոնք ծաղկում են մայիս-հունիսին: Վերոգրյալ շարադրանքում մենք ևս մեկ գույն ենք ունեցել՝ շիկակարմիրը:

¹ **Ստ. Մալխասյանց**, Ծանոթություններ..., էջ 336: Լ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 68:

² ՀԼԲԲ, հատ. Բ, էջ 179:

³ Լ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 68:

⁴ Լ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 69:

⁵ Գունային կողով Արգավան անունը կարելի է հարաբերել «շառագույն կարմիրի» հետ: Տե՛ս ԵՂՐԵԻԱՆԻ (յասաման), Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. II, էջ 25:

⁶ Ա. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 118:

⁷ Հր. Աճառյան, ՀԱԲ, II, էջ 25:

Ընդունելով հանդերձ վերոբերյալ կարծիքների հավանականությունը՝ ասենք, որ ընդգծված հատվածի վերաբերյալ մենք ունենք այլ կարծիք:

Բոլոր ուսումնասիրողները խավրծի ասելով ընկալել են խավրծիլ բույսը, որ կապել են սիրային կախարդանքի հետ, սակայն, մեր կարծիքով, այս հատվածն ունի աստղագիտական և տոմարագիտական նշանակություն, և այս դեպքում՝ պետք է նկատի ունենանք ոչ թե խավրծիլ բույսը, այլ **Խավարածրի** հարթությունը, իսկ Խավարածրի հարթության վրա իշխուն, իշխող տեղ են գրավում միայն 12 կենդանակերպային համաստեղությունները, որոնք տոմարական գրականության մեջ անվանվում են տանուտերեր, և նրանց մեջ «շրջում է Արևը»: Իսկ Արևը իր բարձրակետին է հասնում ամառային արևադարձի ժամանակ: Չի բացառվում, որ այս շրջանում է, որ վիշապն ստացել է արգավան անունը, քանի որ գիշերը անխնա խանձել է ամեն բան՝ լրացնելով ցերեկը երկնքում բազմած Արևին:

Ալանաց դասերը՝ Սաթենիկին, նույնացնելով համապատասխան աստղի հետ, որը դուրս է գտնվում Խավարածրի հարթությունից, և տանուտեր՝ իշխող չի կարող լինել ժամանակի հոլովույթում, քանի որ ինքը Արևը չէր, բնականաբար, պետք է ձգտեր Արգավան՝ «ՎԻՇԱՊ» համաստեղության բարձերին՝ դիրքին, այն է՝ ամառային երկնքում գրաված կենտրոնական դիրքին¹:

Քրիստոնեական ավանդազրույցները Սաթենիկին և նրա ազգականներին առնչում են եղջերու - եղնիկ - քոշերին, որոնք կարող են հարություն առնել: Այսպես, Ոսկյանց մասին ավանդապատումում Թադեոս առաքյալի հրաշագործության հետևանքով, այն է՝ մորթած, խորոված ու կերած եղջերվի ոսկրորները հավաքելով մորթի մեջ, կենդանացնում է նրան, Սաթենիկի բարեկամները (Սուքիասյաններ), ովքեր Աղվանքից էին եկել, քրիստոնեություն են ընդունում: Եղջերուներին են առնչվում Սուքիասյանները (ուղղակի կոչվել են քոշեր), ովքեր ևս Թադեոս առաքյալի հրաշագործության հետևանքով են քրիստոնյա դառնում. նա իր մոտ է կանչում լեռան բարձունքով սուրացող եղջերվին, որին մորթում և ուտում են, իսկ Թադեոսը հավաքելով ոսկրերը՝ լցնում է մորթի մեջ ու վերակենդանացնում: «Դիցաբանական եղջերուի հետ է կապված ս. Աթանագինե-

¹ Հյուսիսային բևեռային աստղի մասին ավելի ուշ:

սի¹ վարքը»: Աթանագինեսի մշտական այցելուն է եղջերուն: Նույնիսկ նրա և իր ընկերների մահից հետո, նրա ամեն տարեդարձի՝ հուլիսի 17-ին, ի հիշատակ վկաների, գալիս է **եղնը և հորթ (ուլ) է ընծայում աստծուն:**

Աթանագինեսի վարքում ուղղակիորեն պատմվում է եղջերվի ձագի՝ այծիկի, ուլի կամ հորթի ծնունդի մասին, ինչը իբրև այլաբանություն էր դրսևորվում և միանշանակորեն հարության իմաստ է պարունակում: Ասենք, որ Աթանագինեսի անունը տոնացույց է մտել շատ ավելի ուշ: Նախապես այդ տոնը կոչվել է «Հովհաննես Մկրտչի և վկայի», ապա այդ վկայի փոխարեն հայտնվել է Աթանագինեսի անունը²:

«...Դիցաբանական եղջերուի զարդակերպարն անցնում է հայ զարդարվեստի ամբողջ ընթացքով մեկ՝ սկսած նախնադարյան ժայռապատկերներից և վերջացրած մեր ժամանակներով: ...»³:

Այստեղ, մեր տեսանկյունից, առավել կարևոր է եղջերվի ծնած ձագը, քան թե եղջերուն, քանի որ միմյանցից տարբեր են եղջերուն ու դրա ծնած ձագը: Եղջերուն համապատասխանում է Ավելյաց օրերից մեկին, որ այդպես էլ կոչվում է ԵՂՋԵՐՈՒ⁴: Իսկ ձագը Կապելլան է:

Թեև Բ. Առաքելյանը եղնիկ-եղջերուների կերպարներում հին գաղափարներ է տեսնում և միաժամանակ գրում է, որ եղջերուն կապված է քրիստոնեական սիմվոլիկայի հետ, որի համաձայն այն ներկայանում է իբրև կարոտ դեպի երկնային արքայությունը⁵:

Եղնիկի կարոտը դեպի երկնային արքայությունը դարձյալ այլաբանորեն Սաթենիկի նույն տեսչն է դեպի «Արգավանի բարձերը»: Ինչպես կտեսնենք, Սաթենիկը, ում հափշտակում է արծիվը, ունի իր զուգահեռները՝ եղնիկի ձագ, գառ, ուլ կամ հարս-աղջիկ: Եվ Սաթենիկին փախցնող արծիվ-անգղ Արտաշեսի քրիստոնեական զուգահեռները կարող ենք տեսնել բազմաթիվ հարթաքանդակներում՝ ճանկող արծվի պատկերա-

¹ Հետաքրքիրն այն է, որ հայոց տոնացույցերում Աթանագինեսի տոնը նշվում է Հովհաննես Մկրտչի հետ միաժամանակ, ինչը մեկ անգամ էլ է ապացուցում, որ վերջինիս իբրև խարտյաշ մանուկ կամ եղջերվի ձագ ընկալելը Գր. Նարեկացու կողմից ընդունված է եղել միջնադարում:

² **Ռ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 569-572:

³ **Ա. Մնացականյան**, Դիցաբանական եղջերուն միջնադարյան հայ արվեստում, Բանբեր Մատենադարանի, թիվ 12, Եր., 1977, էջ 7:

⁴ Ավելյացի Եղջերու օրն այլ քննության նյութ է:

⁵ **Բ. Առաքելյան**, Հայկական պատկերաքանդակները 4-7-րդ դարերում, Եր., 1949, էջ 90:

քանդակներով (տե՛ս նկարները), որոնց խնդրին անդրադարձել է Կ. Մաթևոսյանը¹: Նորավանքի Բուրթելաշեն Ս. Աստվածածին եկեղեցի-դամբարանի (1318-1345 թթ.) քանդակագործական հարդարանքը՝ արևելյան պատի արծվաքանդակը նախկինում մեկնաբանվել է՝ որպես Օրբելյանների տոհմի զինանշան^{2,3}։ «...արծվաքանդակը անմիջականորեն առնչվում է խաչի խորհրդի հետ...», «խաչն առաջին հերթին խորհրդանշում է **Քրիստոսի խաչելությունն ու հարությունը**», քրիստոնեական պատկերագրության մեջ միջնադարում **արծիվը դարձել է «Քրիստոսի համբարձման խորհրդանիշը»**⁴։ Ըստ Ներսես Շնորհալու և իրեն նախորդող մեկնիչների՝ ճանկող արծվի պատկերը մի դեպքում՝ նշանակել է մեռելների հարությունը Քրիստոսի երկրորդ գալուստի ժամանակ⁵, մյուս դեպքում՝ «մինչև Տիրոջ երևալը հրեշտակների փողերի ձայնից մեռելները հառնում են, և յուրաքանչյուր հոգի, իբրև արծիվ վերևից սլանալով, դիմում է դեպի իր մարմնի գեշը, այն է՝ իր դիակը։ Կեսն ասում են, որ դա հրեշտակների սլացումն է, որոնք արյամբ նահատակված մարտիրոսներին ու վկաներին են հափշտակում դեպի փառքը....., որտեղ հավաքվում են Տիրոջ ընտրյալները»⁶։ «Ճանկող արծվի» պատկերը կապ չունի զինանշանների հետ, այն ոչ մի նախարարական տան զինանշան չէ⁷։

Արծվի ճանկերում պատկերված են տարբեր կենդանիներ։ Շատ հստակ հնարավոր է տարբերել՝ ոչխար կամ գառ, եղջերու (Հերիեր կամ Երեբան), եղնիկ (Բուրթելաշենի Մարիամ Աստվածածին), նապաստակ (Աթենքի Փոքր Մետրոպոլիտ եկեղեցի), ինչպես և մի շատ փոքր կենդանի (Անիի մայր տաճար), որն ուղղակի խորհրդանշում է ձագ գաղափարը կամ էլ, զուցե, այն կուզ (կատու) է՝ ոչ հստակ ուրվագծված, ինչպես և Գանձասարի քանդակում ոչ միայն այդ անորոշ փոքր կենդանին է, այլև ճանկերում աղջիկ է, որն ուղղակի ասես վիպասանքի Սաթենիկին

¹ Կ. Մաթևոսյան, Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Եր., 2017, էջ 70-82:

² Ռ. Մաթևոսյան, Հայկական զինանշաններ, Ե., 1994, էջ 61:

³ Կ. Մաթևոսյան, Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Եր., 2017, էջ 70:

⁴ Նույն տեղում, էջ 73: Տե՛ս **Դ. Холл**, Словарь сюжетов и символов в искусстве, М., 1996, с. 406:

⁵ Կ. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 74:

⁶ Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթեոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալոյ, Կ. Պոլիս, 1825, էջ 509 (փոխադրումն աշխարհաբարի մերն է – Գ. Ս.):

⁷ Կ. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 77:

հափշտակած Արտաշես թագավորի քանդակը լինի: Չփորձելով հակադրվել «ճանկող արծվի» կամ «հարձակվող արծվի» պատկերի միջնադարյան քրիստոնեական ընկալումներին ու մեկնություններին՝ մենք այստեղ տեսնում ենք հինկտակարանային Աստված և Արուսյակ փոխհարաբերության արտացոլումը: Թեև Աստված վայր զցեց իր բարձունքից Արուսյակին, սակայն իր ճանկերում է պահում նաև նրան, քանզի նա ևս իր արարածն է¹: Այս Արուսյակին է, որ Աստված փորձում է դարձյալ երկինք բարձրացնել: Թեև նրանք հակադրված են, բայց ոչ հավասար հիմունքներով, այսինքն Արուսյակը, այն է՝ Սատանան, ոչ թե չարի աստված է, այլ Աստծու ստեղծագործություն: Եբրայերենում Սատանա անվան թվային արժեքը 364 է², որն ընդամենը մեկ օր հինգ ժամ քառասունութ րոպե քառասունվեց վայրկյանով է պակաս արևադարձային տարուց. այն հավասար է 365 ժամ 48 ր. 46 վրկ: Աստված լուսատուները քանի որ ստեղծել էր իբրև ժամանակի ցուցիչ, ապա եթե այս Արուսյակով ժամանակի հաշվարկ կատարեին, տոները կանոնակարգել չէին կարողանա, այդ տոների օրերն անընդհատ կտեղափոխվեին տարվա տարբեր եղանակներ: Այդ իսկ պատճառով նա այլևս պիտանի չէր ճշգրիտ ժամանակը ցույց տալու համար՝ տոմարագիտական առումով և պետք է հեռացվեր՝ անկում ապրեր:

«Ճանկող արծիվ» անվանումը նույն «ՔՆԱՐ» համաստեղությանը տրվող «<ԱՐՁԱԿՎՈՂ ԱՐԾԻՎ-ԱՆԳՂ» անվանումն է՝ իր ներքին բովանդակությամբ: Հարձակվելիս է արծիվը ճանկում իր որսը:

Սատանայի անուններից մեկը Ազազել է, ինչպես վերոբերյալ շարադրանք ում տեսանք, այն այժքաղն է: Սատանան, ում կերպարը մոտ է օձի կերպարին, հատուկ թշնամանք է տաճել օր., Դավթի հանդեպ, որը մեր դիցաբանության համաձայն, Արտաշես արծիվն է: Եղջերուները առնչվում են օձերի հետ: Սատանան նախանձում է մարդուն: Սատանան ներշնչել է ընտրյալ ժողովրդին երկրպագելու «ոսկե հորթին»: Այս «ոսկե հորթը» մի՞թե կովի ձագն է: Այստեղ կարևորենք ձագի, փոքրի գաղափարը, մանավանդ որ հորթ կամ ուլ են անվանում եղնիկի ձագին ևս,

¹ Հայտնի է Որոզինեսի ընդունելություն չգտած տեսությունն այն մասին, որ Քրիստոս իր երկրորդ գալուստին փրկելու է նաև Արուսյակին ՄՀՄ, Ե. II, Կ. 413:

² Փաստորեն Արուսյակը տարվա մեջ միայն մեկ օր իշխանություն չունի: ՄՀՄ, Ե. II, Կ. 412:

իսկ մայրացած եղնիկին անվանում են եղջերվակով: Բնականաբար, այս հոգով հարուստ Սատանան ո՞ւմ պետք է խորհուրդ տար երկրպագելու, եթե ոչ իրեն, ով առաջնորդվում էր նախանձով, այն է՝ նախ իր անձը, ինքը: Հետևապես Սատանայի կուռքը՝ «ոսկե հորթը», եղջերվաձագն է, ինչը հիմնավորվում է դրա Ազագել անունով:

Կաբալիստները Սատանային առնչում են ձախ կողմի ու հյուսիսի հետ, ինչից երևում է, որ դրան առնչել են երկնքի հյուսիսային կիսագնդի աստղերից մեկի հետ, որոնցից ամենահայտնին «ԿԱՌԱՎԱՐ» համաստեղության **Կապելլա-ՈՒԼ** աստղն է:

Ներկայացնենք **Կապելլա** ժամանակակից բնութագիրը: **Կապելլա**, α «ԿԱՌԱՎԱՐ»ի, 0, 1 աստղային մեծության աստղ: Լուսավորությամբ **Արեգակին գերազանցում է 150 անգամ**, տրամագծով՝ 16 անգամ: **Երեք աստղից** կազմված համակարգ է: **Հյուսիսային միջին լայնություններից երևում է ամբողջ տարին, քանի որ գտնվում է բևեռին շատ մոտիկ:** Այն **տարվա ընթացքում ընդամենը 5 ժամ է բացակայում երկնքից:**¹ Եթե առաջնորդվելու լինենք հայոց շարժական տոմարով, ապա Կապելլան լավագույնս կարող էր ցույց տալ տարեսկիզբն ու տարեմուտը, մոտավորապես 365 օր, իսկ չերևալու 5 ժամը կարող է դառնալ հայոց տոմարի շարժականության պատճառ:

Կապելլայի հայկական հին անվանումը՝ Ուլ, շատ համահունչ է հնդեվրոպական *ol կամ *el արմատին, համարձակություն ունենամ ասելու նաև՝ մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսում Նիպպուրի շումերական միալեզու աստղացուցակում պահպանված է մոլորակների շումերական *udu-idim* անվանումը, որը հետագայի երկլեզվյան սերիայում *Ur5-ra* = *hubullu* (կրճատ՝ *Urra*) նույնացվել է աքքադական *bibbu*, բառացի. «**վայրի ոչխար**» (= այծ = ուլ –Գ.Ս.) իմաստի հետ:

Առաջին անգամ *hubullu* անվանումը հանդիպում է (Իսսինի առաջին դինաստիայի առաջին արքաներից մեկին նվիրված հիմնում «Հիմն Նինսիաննան Իդդին –Դագանի համար», ով կառավարել է մ. թ. ա. XX դ. առաջին կեսում²: *Hubullu*-ն եթե նույնանում է «վայրի ոչխար» իմաստի հետ, ապա «Hub» մասը շատ է հիշեցնում ոչխար բառի հով (*овень*) ժա-

¹ Ս. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 72:

² Տե՛ս.: ETCSL.Text 2.5.3.1:89, 135.


մանակակից հայոց լեզվում կորած հոմանիշը, որը պահպանված է հովիվ բառում (չի բացառվում, որ ուրարտական պանթեոնի Խուբա աստվածանունը ևս նույն արմատով է ձևավորված), իսկ սև-ն՝ ուլ: Այսինքն այստեղ խոսքը ոչխարի (այծի կամ եղջերվի) ձագի մասին է: Հավանաբար, այս երեք կենդանիներն իրենց տեսքով այնքան շատ նման են եղել, առանձնապես չեն տարբերվել դրանց ձագերը:

Թեև ընդունված է համադրել այն Վեներայի հետ, սակայն ամեն ինչ հանգեցնում է Կապելլային:

Իսկ տոմարական ժողովածուներում դրանց առկայությունը պայմանավորված է ոչ միայն այդ համաստեղությունների ու մոլորակի արդեն մոռացված, սակայն ժողովրդի ենթագիտակցության մեջ պահպանված պաշտամունքով, այլև երկրագործական տարվա մեջ՝ ամառնամուտից մինչև ձմեռնամուտ, ունեցած կարևորագույն նշանակությամբ: Ալանաց դասերը՝ Սաթենիկին, կարելի է նույնացնել Կապելլայի՝ «Այծիկ – Ուլ-Եղնիկի» հետ՝ իբրև աստեղնալից երկնքի հյուսիսային կիսագնդի 6-րդ մեծության աստղ, ինչպիսին Արևն է: Այն դուրս է գտնվում Խավարածրի հարթությունից և տանուտեր՝ իշխող չի կարող լինել ժամանակի հոլովությամբ, բնականաբար, պետք է ձգտեր Արգավանի բարձերին, այն է՝ վիշապի ամենաբարձր դիրքին՝ ամառային արևադարձի ժամանակ¹: Դիցաբանական ըմբռնումների դիրքերից մարդկային փորձը դիտարկվել է տիեզերական երևույթների համանմանությամբ²: Այդ իսկ պատճառով հայկական վիպերգի՝ բերված հատվածի քննությունը տոմարագիտական տեսանկյունից թույլ է տվել այն կապել «ԿԱՌԱՎԱՐ» կամ «ՍԱՅԼՈՐԴ» համաստեղության գլխավոր **α «Կապելլա»**³ աստղին (ունի հետևյալ հոմա-

¹ Եթե շատ ավելի հին են պատկերացումները, ապա ձգտում է «ՎԻՇԱՊԻ» **α** Տուբան հյուսիսային բևեռային աստղի դիրքին:

² **Պ. Բարսեղյան**, Վաղ հավատալիքներն ու դիցաբանությունը Հայաստանում, Եր., 2015, էջ 99:

³ **Կապելլա** – Աստղաբանական ավանդույթում ամենակարևոր աստղերից մեկն է: *Incipit liber Hermetis de 15 stellis tractans et 15 herbis et 15 lapidibus et 15 figuris* ("Սկիզբ գրքի Հերմեսի 15 անշարժ աստղերի, 15 բույսերի, 15 քարերի ու 15 ձևերի մասին"), վերագրված Հերմես Տրիսմեգիսին, գրքում նա նշված է առանձնահատուկ նշանով՝ : – Իր պայծառությամբ աստեղնալից երկնքում վեցերորդն է և ամենահյուսիսայինը:

նիշները՝ Capella Capra, Caper¹, Amalthea², Jovis Nutrix³, **Ալքայոս, հուն.** Άιξ, արաբ. آيوك > al-'Ayūg, Hircus⁴): Մյուս աստղերն ունեն հետևյալ անունները՝ **β** Մանկալիներ - արաբ. mankib ծի-l-'inān⁵, **δ** «Պրաջապատի»⁶, **ε** Մասս, Ալմազ, Ալ մազ «արաբ. այծ», **λ** Al Hurr» Al Hurr «Եղջերու»:

Աստղաբանության մեջ հայտնի են 24 կենդանակերպեր, որոնցից 12-ը գտնվում են Խավարածրի հարթության վրա և հանրահայտ են: Սրանցից զատ գոյություն ունեն ևս 12՝ վերին կամ արտաքին կենդանակերպեր⁷ 1. **1.** Ժամացույց (Յեֆեուս - մարտի 14-27-ը [«ՁԿՆԵՐ» - «ԽՈՅ»]), **2.** Թևավոր ձի (Պեգաս - 12-25 փետրվարի [«ՋՐՀՈՍ» - «ՁԿՆԵՐ»]), **3.** Սֆինքս (Կարապ - 13-26 հունվարի [«ԱՂԾԵՂՋՅՈՒՐ» - «ՋՐՀՈՍ»]), **4.** Բռնակոթ (Կասիոպեա - 15-28 դեկտեմբերի [«ԱՅԵՂՆԱՎՈՐ» - «ԱՅԾԵՂՋՅՈՒՐ»]), **5.** Օձակիր (15-28 նոյեմբերի [«ԿԱՐԻՃ» - «ԱՂԵՂՆԱՎՈՐ»]), **6.** Ագռավ (16-29 հոկտեմբերի [«ԿՇԵՌՔ» - «ԿԱՐԻՃ»]), **7.** Եզոդ (Եզնարած, Արջապան) - 16-29 սեպտեմբերի [«ԿՈՒՅՍ» - «ԿՇԵՌՔ»]), **8.** Ասպետ (Հերկուլես - 16-29 օգոստոսի [«ԱՌՅՈՒԾ» - «ԿՈՒՅՍ»]), **9.** Սայլ- («ՄԵԾ ԱՐՋ» - 16-29 հուլիսի [«ԽԵՑԳԵՏԻՆ» - «ԱՌՅՈՒԾ»]), **10.** Արգոնավ (Ղեկակալ - 14-28 հունիսի [«ԵՐԿՎՈՐՅԱԿ» - «ԽԵՑԳԵՏԻՆ»]), **11.** Օրիոն (Հայկ 14-27 մայիսի [«ՅՈՒԼ» - «ԵՐԿՎՈՐՅԱԿ»]), **12.** Կետ (13-26 ապրիլի [«ԽՈՅ» - «ՅՈՒԼ»]):

Ինչպես նկատելի է այս վերին կենդանակերպերից յուրաքանչյուրը

¹ Լատիներեն *Crepa* «այծիկ» արմատից են ծագել: Լատիներեն բանաստեղծական ձևերը՝ *Olenia, Olenie, Capra Olenie, Olenium Astrum*: Լատին պոետների մոտ միևնույն ընդհանուր անվանումն է:

² Պատմական անվանումները հղում են Ջևսին կերակրած Ամալթեա այծին:

³ *Jovis Nutrix* - Ջևսի ծծմայր:

⁴ Հուն. Այծ-ից (Άιξ) Պտղոմեոսի մոտ հունարենում հունա-արաբական ձևից *Αιουκ* արաբական (տրանսկրիպցիա *al-'Ayūg*). Հնարավոր է, որ այս բառը նշանակել է նաև արաբների **անապատային ոչխար**:

⁵ Մարդակազմական անվանումը թարգմանաբար՝ «սայլի սանձի տիրակալի *Ուար*» Պտղոմեոսի մոտ «*Աջ ուսի աստղ*»:

⁶ Հավանաբար, անվան ծագումը սանսկրիտից, որ թարգմանաբար նշանակում է «Արարչության Տէր», մյուս կողմից՝ *արաջան* - Հնդկաստանի ստորին կաստաներից մեկն է: Երրորդ կողմից *Պրաջա-պատի* (թվով յոթ) - մարդկության նախածնողներն են, որոնք փոխարկվել են Մեծ Արջի 7 աստղերի:

⁷ Շարքում քառակուսի փակագծերով միաժամանակ կներկայացնենք Խավարածրի հարթության վրա գտնվող կենդանակերպերը:

ընդամենը 13 օր է համապատասխանում այս կամ այն ամսին, սակայն միաժամանակ համապատասխանում է երկու ներքին կենդանակերպերի: Ելաստեղ - մայիսի 24-ին և «ԵՐԿՎՈՐՅԱԿ» այս շարքում համապատասխանում են Օրիոն – Հայկը և Արգոնավը: Թեև Օրիոնին չենք անդրադարձել, սակայն որսորդ Օրիոնն էլ հալածում է Արտեմիսի եղջերվին: Ինչպես ցույց տվեցինք, դիցաբանորեն հետաքրքիր առնչություն ունեն նաև «ՄԵԾ ԱՐՁ» համաստեղությունն ու Կապելլա աստղը և Արգոնավորդները, այդ կապը դրսևորված է նաև աստղագիտորեն:

Նշենք նաև, որ աստղագիտական գրականության մեջ Վեներա մոլորակին համարժեք դրված է նաև Ելաստղ անունը¹, որը չգիտեմ, թե ինչ հիմնավորումներ ունի:

Ինչպես նկատելի է, համապատասխան առասպելները առավել առնչվում են արտաքին կամ վերին կենդանակերպերին, որոնք այժմ ասես շրջանառությունից դուրս են եկել, սակայն առավել բացահայտորեն են ցույց տալիս, թե տվյալ առասպելներն ուղղակիորեն աստղագիտության կամ ավելի ընդգրկուն, տիեզերքի այլաբանական պատկերներն են:

Մեր հիմնավորումները, թե տոմարական բնագրերում ‘Ելաստղ’, ‘Եղաստղ’, «Ել» անունով հանդիպող տոմարական եզրը վերաբերում ոչ թե Վեներա մոլորակին, այլ «ԿԱՌԱՎԱՐ» համաստեղության «Կապելլա»-«Այծիկ» կամ «Ուլ» աստղին, ավարտենք 1752 թվականին Մեծ Կեսարիայի արքեպիսկոպոս Սարգիս վարդապետ Կոստանդնուպոլսեցու հրատարակված Էֆիմերտեի տվյալով՝ «մայիսի.... 21՝ մուտ արեգական յերկաւոր կենդանակերպն,, 22, 23, 24՝ յառաւօտուն ցածանայ տուտ Արջին,....., 25, 26, 27՝ երևի Այծիկն յառաւօտուն»²:

Ընդամենը մեկ-երկու օրվա տարբերություն է արձանագրված Ելաստեղի ու Այծիկի, այն է՝ ՌԻԼ-ի կամ Կապելլայի ամսաթվային գրանցման մեջ, որը 11-12-րդ դարից մինչև 18-րդ դարի կեսերը, մոտավորապես 600 տարվա ընթացքում, կարող էր արտահայտվել:

Անկաստեղ – Ելաստեղ ժամանակային հարաբերակցությունը՝ 40 օր (ապրիլի 14-ից մինչև մայիսի 24), կրկնում է Զատիկ-Համբարձում հարաբերակցությունը, որին ավելացնելով Նոր կիրակիի մեկ շաբաթը, համարյա հասնում է մինչև Հոգեգալուստ՝ Պենտեկոստե: Այսինքն այս ժամա-

¹ Բ. Ե. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1968:

² Գրգուկ որ կոչի Էֆիմերտե, Եր., 1992, էջ 66:

նակահատվածը Քրիստոսի հարության տոնից մինչև Հոգեգալուստ շրջանն է ներառում:

Ամփոփելով ասենք, որ տոմարական բնագրերը, վիպասանը, համաշխարհային առասպելաբանությունը, լեզվաբանությունն ու աստղագիտությունը թույլ են տալիս եզրահանգելու, «Ելաստեղը» այլաբանորեն ու ծածկագրված պահպանել է մեր ժողովրդի նախագիտելիքները ժամանակային, եղանակային, տիեզերագիտական պատկերացումների մասին: Ինչպես երկվորյակ եղբայրներ Երվանդի ու Երվազի կերպարներում արտահայտված ենք գտնում նաև «Երկվորյակ» կենդանակերպի ու ամռան հետ կապված այլ աստղերի ու համաստեղությունների՝ «ՄԵԾ ԱՐՋ», «ՎԻՇԱՊ», «ԱՄԱՌԱՅԻՆ ԵՌԱՆԿՅՈՒՆ», «ԵՂՆԱՐԱԾ», մասին եղած պատկերացումները, այնպես էլ ճանկող արծվի հարթաքանդակներում արտահայտված են ոչ միայն հոգիների հարության ու համբարձման քրիստոնեական գաղափարները, այլև ամառ-աշուն եղանակային երևույթներ, իսկ դրանցում պատկերված կենդանիները քրիստոնեական խորհրդանիշներից զատ խորհրդաբանում են նաև համապատասխան համաստեղություններ՝ այն է՝ Արտաշես (անգղ-արծիվը՝ «ՀԱՐՁԱԿՎՈՂ ԱՐԾԻՎ», այժմ «ՔՆԱՐ», որ և «ԱՆԿԱՍՏՂ»ն է, իսկ Սաթենիկ (եղնիկը, ուլը, գառը ևն), «ԿԱՌԱՎԱՐ» համաստեղության Կապելլա՝ Ուլ աստղն է, այն է՝ «ԵԼԱՍՏՂը»:

ԵԼԱՍՏՂ

(ՏՈՄԱՐԱԿԱՆ ՄԻ ԵՂՐՈՒՅԹԻ ՀԵՏՔԵՐՈՎ)

ԳԱՅԱՆԵ ՄԻՄՈՆՅԱՆ

ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ՝ Կրոմար, Ելաստղ, դիցաբանություն, երկվորյակներ, «ԵՐԿՎՈՐՅԱԿ» համաստեղություն, «ՄԵԾ ԱՐՋ», եղջերու, այծիկ-ուլ, Կապելլա, ամառ, Արտաշես, Սաթենիկ

«Ելաստղ» տոմարագիտական եզրույթը չի նշանակում որևէ աստղի ծագում, ինչը կարող է ընկալվել դրա բառակազմությունից: Եզրույթի ստուգաբանական, դիցաբանական ու աստղագիտական քննությունը բերում է հետևյալ եզրակացության՝ այն վերաբերում է «ԿԱՌԱՎԱՐ» (Auriga) համաստեղության Կապելլա աստղին: Բառը կապված է «ՔՆԱՐ», «ԱՐԾԻՎ» և «ԿԱՐԱՊ» համաստեղությունների հետ, որոնք ձևավորում են երկնքի Ամառային եռանկյունը: Նշվելով անշարժ տոմարի ամսաթվով՝ մայիսի 24-ին, «Ելաստղը» կապված է ոչ միայն հեթանոսական ու քրիստոնեական հավատալիքների, այլև միջակայն կեն-

դանիների ու թռչունների (արջ, օձ, վիճապ, արծիվ, եղնիկ, գառ, ուլ ևն) հետ: Այն անմիջականորեն կապված է նաև Քրիստոսի Հարության, Համբարձում ու Հոգեգալուստ տոների հետ:

ЕЛАСТГ

(по следам одного календарного термина)

Гаяне Симонян

Ключевые слова: календарь, Еластг, мифология, близнецы, созвездие Близнецы, Большая медведица, олененок, козленок, лето, Арташес, Сатеник.

Календарное название “ЕЛАСТГ” не указывает на восход звезды, о чем может свидетельствовать семантическая структура слова. Этимологическое, мифологическое и астрологическое исследование термина свидетельствует, что ‘ЕЛАСТГ’ это название звезды Капелла, созвездия Возничий (Auriga). Слово связано с созвездиями “Лира”, “Орел” и “Лебедь”, образующие так называемый “Летний треугольник” неба. Согласно неподвижному календарю 24 мая является днем звезды “Еластг”, который связан не только с языческими верованиями, но и астрологическими и мифическими животными и птицами (медведь, змея, дракон, орел, олень, ягненок, козленок и т.д.). Звезда непосредственным образом связана с праздниками Воскресение Христова и Пятидесятница.

ELASTGH (CONCERNING CALENDAR TERM)

Gayane Simonyan

Key words: calendar, Elastgh, mythology, Gemini, the Constellation of Gemini, Ursa Major, deer, summer, Artashes, Satenik.

Calendar name ‘Elastgh’ does not mean “the rise of a star”, to which the semantic structure of the word refers. Etymological, mythological and astrological studies of the term show that ‘Elastgh’ is the name of the star Capella, in the constellation of Auriga. The word is connected with the constellations of “Lyra”, “Eagle” and “Swan”, which form the so-called “Summer Triangle” in the sky. Celebrated on a fixed date -May 24 - the star ‘Elastgh’ is associated not only with pagan beliefs, but also with astrological and mythical animals and birds (bear, snake, dragon, eagle, deer, lamb etc.). It directly relates to the Resurrection of Christ and Pentecost.